Է. ՏԱՐԻ 1976 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 7 ՆԱՒԱՍԱՐԴ 4383 — Հ. Տ. 17 ՕԳՈՍՏՈՍ 1890 — Ն. Տ. 29 ՕԳՈՍՏՈՍ 1890 — ՀԻՃՐ. 13 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1308 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آرهولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

180
80
40
100
160
56
28

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 17 ՕԳՈՍՏՈՍ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԻՊՔԵՐՆ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐՆ Ի ՖՐԱՆՍԱ

Լոնտոնի ֆրանսական դեսպան Պ. Վատինկթըն, երբեմն արտաքին գործոց նախարար և վարչապետ Ֆրանսայի, բանախօսելով Էնի գաւառին ընդհանուր ժողովոյն բացման առթիւ, որոյ նախագահն է, ակնարկ մը նետեց ներքին և արտաքին կացութեան վրայ, և մասնաւորապէս ուշադրութիւն հրաւիրեց Զօր. Պուլանժէի բոլորովին անկեալ վիճակին վրայ, մինչ Էնի գաւառն և այլ գաւառք անցեալ տարի սաստկապէս յուզեալ էին պուլանժէական վէճերով. Ըսաւ թէ Լոնտոնի մէջ անցեալ տարի շատ մը փորձառու և ուշիմ մարդիկ այն համոզման յանգած էին թէ Պուլանժէ Ֆրանսայի վերին իշխանութիւնն իւր ձեռքը պիտի անցունէ, և իբրեւ արդիւնք այս համոզման, Անգլիացիք վարանմամբ էին Ֆրանսայի նկատմամբ հետեւելի ընթացից մասին. Պուլանժէի յաջողութեան չէին բաղձար Անգլիացիք, որք ընդհակառակն կը վախնային թէ իւր յաջողութիւն միջազգային շփոթութիւններ յառաջ պիտի բերէր. Հիմակ այս ամենայն փոխուած է. Ամօթապարտ մնացած են անոնք որ հաւանական կը համարէին Պուլանժէի յաջողութիւնն, և երբեմն զինք գովաբանողներ այժմ բաւական խիստ ածականներ չեն գտներ զինք պախարակելու համար. Պ. Վատինկթըն ֆրանսացի ընտրող ժողովրդեան ողջմտութեան վերագրեց սա իրողութիւն թէ Հանրապետութիւնն օտարազգիք աւելի քան երբեք ամրապէս հաստատեալ կը համարին ի Ֆրանսա. Անգլեւգերմանական համաձայնութիւն մը կնքեցաւ, նաեւ անգլեւֆրանսական համաձայնութիւն մը, որով, թեեւ գիջումներու փոխարէն, Ֆրանսա հաստատուելութիւններ ձեռք բերաւ. Պ. Վատինկթընի համոզումն է թէ երկար ժամանակի մը համար Եւրոպիոյ խաղաղութիւնն ապահովեալ է, թէ երբեք հիմակուընէ աւելի ապահով չէ եղած միջազգային խաղաղութիւն. Թէպէտ, ըսաւ, դիւրաբորբոք տարերք կը գտնուին Պալքանեան թերակղզւոյն մէջ, բայց ամեն արքունեաց մէջ և ամեն դեսպանատանց մէջ հաստատ մտադրութիւն կայ բան մը չընելու որ կրակ տայ այն դիւրավառ նիւթոց. Ո՛չ ոք միտքէն կ'անցունէ Ֆրանսայի վրայ յարձակիլ, որովհետեւ ամեն ոք գիտէ թէ Ֆրանսա վստահ է իւր զօրութեան վրայ և ուրիշ Տէրութեան մը չսպառնար. Այս իրողութիւն պատճառ չէ սակայն որ Ֆրանսա դադրեցնէ իւր զգուշութիւն. Ոչ մէկ զոհողութիւն պէտք է խնայենք մեր գեղեցիկ բանակը պահելու այն բարձր դիրից մէջ ուր հասած կը գտնուի զարդիս. Ֆրանսայի զօրութիւնն Եւրոպիոյ խաղաղութեան զօրաւոր մէկ երաշխաւորութեանց մին է.—Այս ապահովիչ խօսքեր Պ. Վատինկթընի պաշտօնակցաց վրայ շատ լաւ տպաւորութիւն ըրին, և անպիտի լրջամիտ քաղաքագէտի մը բերնէն ելած այս խօսքեր նոյնչափ լաւ տպաւորութիւն պիտի ընեն անշուշտ օտարազգեաց վրայ ևս.

ԳԱՂԹԱՅԻՆ ԱՐԿԱԾՔ ՖՐԱՆՍԱՅԻ

Սենեկալէ եկող [illegible] ֆրանսական շոգենաւը Ֆրանսա բերաւ զգնդապետ Արչինար, որ, ինչպէս յայտնի է, Ֆրանսայի դէմ շարժող արաբ ցեղապետները նուաճելու գացած էր. Գնդապետին հաղորդած տեղեկութիւններէն կ'երեւի թէ Ֆրանսայի դէմ մեծ շարժում մը պատրաստուած էր, որոյ գլուխն էր սուտանցի ցեղապետ Ահմատու, որոյ մէկ նամակը՝ գնդապետին ձեռք ինկած՝ ապստամբութիւններու դէմ ընդհանուր շարժում կը քարոզէր. Ահմատու կ'ըսէր թէ «Եւրոպացիք աղտաբեր ցեղ մ'են. Պէտք է բառնալ զանոնք. Շարժինք ուրեմն՝ ազնուապէս մեռնելու համար, կամ այս Ֆրանսացիներն հեռացնելով վայելչապէս ապրելու համար. Ես պիտի լինիմ պետ այս շարժման.» Արչինար գնդապետին հրամանաց ներքեւ գտնուող զօրքերն այս ձգտումներու վերջ տուին, և իւր պաշտօնն աւարտելով, և տեղւոյն իշխանին որդին իբրեւ պատանդ Ֆրանսա բերելով, ուր պիտի դաստիարակուի, գնդապետը կրցաւ ծանուցանել շարժման վախճանը.

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ Ի ՌՈՒՍԻԱ

Ֆրանսական լրագիրք կը պատմեն թէ Վիլհէլմ Կայսր ի Ռէվալ հասնելուն ընդունեցաւ Զարին եղբօր կողմէ, և պաշտօնական ներկայացումներէ ետքն, իւր տրամադրութեան ներքեւ դրուած կայսերական կառախումբը նստաւ. Զարն իրեն կը սպասէր Նարվայի կայարանին մէջ, ուր կառախումբը դեռ եւս կանգ չառած, գերման կայսրը, տեսնելով զԱլեքսանդր Գ., վար ցատկել ուզեց. Անշուշտ գետին պիտի իյնար այս անխորհուրդ շարժմամբ, եթէ Զարը, փ[…]նելով և երկու մեծ քայլ մը առնելով դէպ յառաջ, չբռնէր զՎիլհէլմ Բ., և չկեցնէր զօրաւոր շարժմամբ մը, ժպտելով հանդերձ արկածին վրայ. Վիլհէլմ կայսր շատ յուզուեր է, որովհետեւ քիչ էր մնացած որ գետին փռուէր իբրեւ ո՛ և է անզգոյշ պատանի՝ Ռուսիոյ ամենափայլուն սպայակոյտի մը անզամոց առջեւ տարածուելով.

ՄԻԱՊԵՏԱԿԱՆՔ Ի ՖՐԱՆՍԱ

Պ. Տիւկէ տը Լաֆօքօնրի, կայսերական-միապետական երեսփոխան Օրնի, և պահպանողական կուսակցութեան ամենէն եռանդուն գործիչներէն մին, այս օրերս նոր նամակ մ'ուղղելով իւր կուսակցաց և քաղաքական բարեկամաց, խորհուրդ տուաւ որ բացարձակապէս Հանրապետութեան յարին, իբրեւ երկրին ճանչցած դրութիւնն ընդունելով զայն, ո՛չ թէ զիջում ընելով Հանրապետականաց կամ դաշնակցելով անոնց հետ, այլ Հանրապետութեան կառանին վրայ արդի հանրապետական վարչութեան դէմ մաքառելով եւ անոր տեղն անցնելու եւ պահպանողական վարդապետութիւններն Հանրապետութեան հովանւոյն ներքեւ իրագործելու աշխատելով. Հանրապետութիւն մը կրնայ պահպանողական ալ լինել. Ճակատագրային դժբախտութիւն մը չէ որ ամեն Հանրապետութիւնք արմատական և հակակրօն լինին, և այս վառվռուն միապետական յիշոյս է պահպանողական Հանրապետութիւն մը հիմնելու, որուն ապաքէն կը փափաքէր Պ. Թիէռ, որոյ սկզբունքն էր թէ «Հանրապետութիւնը Ֆրանսայի մէջ արմատ բռնելու համար պահպանողական պէտք է լինի, ապա թէ ոչ չի՛ մնար».

Ի ՄԱՐՈՔ

Խաղաղութիւնն հեռի է հաստատուելէ Մարոքի մէջ, որոյ վեհապետն ամենայն զօրութեամբ կը շարժի ըմբոստ ցեղերուն դէմ, որոց յաջողութիւնք և ծայրայեղութիւնք ծանուցուեցան արդէն. Ըստ վերջին լրոց, անակնկալ շարժմամբ մը Էմիրն յաջողած է զարնել գլխաւոր ապստամբ ցեղն, որոյ ձեռք դերի ինկած էր իւր որդին, և յաղթութիւն տանելով, նոյն ցեղէն բռնուած 80 գերիները գլխատել տուած է յօրինակ այլոց.

ՍԵՐՊԻԱ

Միխայէլ մետրապոլիտ, որ տակաւին վէճի մէջ է […]կան և կրթական նախարարին հետ՝ եկեղեցականաց ամանց անուանումներու մասին, երկար յիշատակագիր մը ուղղեր է Զարին, սերպ եկեղեցւոյն վտանգեալ վիճակը պարզելով, և առաջարկելով որ Պելկրատի մետրապոլտական աթոռը վերածուի պալքանեան Պատրիարքութեան աթոռի, ենթարկուելով հաւանութեան Օսմ. Կայս. Կառավարութեան. Մակեդոնիոյ և Պոսնիոյ եպիսկոպոսք առաջարկուին Օսմ. Կառավարութեան կամ այլոց կողմէ, անուանման իրաւունքը վերապահուելով Պատրիարքին. Լ. Հէրըլտ և Մօն. Օրիանթալ որք այս լուրը կը քաղեն Փարիզի լրագրերէն, կը յարեն թէ սերպ կառավարութիւնն հակառակ է մետրապոլտին այս գաղափարաց, ըստ որում անհրաժեշտ կը դատէ բացարձակ պահպանել սերպ Եկեղեցւոյ կատարեալ անկախութիւնն և ինքնուրոյն հանգամանքն, որ պիտի վտանգուէր եթէ հաստատուէր մետրապոլտին ծրագրած պատրիարքական կազմակերպութիւնը.

ՌՈՒՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ հարաւային նահանգաց ամանց ժողովուրդք դէպ ի Սիպերիա կը գաղթեն՝ բնակութեան աւելի յարմար վայրեր որոնելով. Ալթայեան հարաւ լեռնաշղթայն մանաւանդ մեծ գաղթականութիւն մը առ ինքն կը ձգէ, որովհետեւ հոն բնակութիւնն աւելի խիտ է, և գաղթողք իրենց պարագայներն եւս իրենց մօտ կը բերեն հետզհետէ. Ռուս կառավարութիւնն ամեն դիւրութիւն կուտայ գաղթականաց՝ Սիպերիոյ պետական հողերուն վրայ հաստատուելու.

Այս շարժումէ զատ ուրիշ շարժում մ'եւս կայ, որ Եքաթէրինոսլաւի, Փոլթավայի և Քէրսոնի երեք նահանգաց բնակիչները, մանաւանդ Հրեաները, դէպ յԱմերիկա կը ձգէ.

ԻՆՔՆՈՐԻՆՈՒԹԻՒՆ ՖԻՆԼԱՆՏԻՈՅ

Ֆինլանտիոյ ինքնօրէն Դքսութեան մաքսային և դրամական դրութիւնը ռուս Տէրութեան ընդհանուր մաքսային և դրամական դրութեան հետ միացնելու պաշտօն ունեցող պետական յանձնաժողովն աւարտեց իւր խորհրդակցութիւններ, և ծրագիր մը խմբագրեց, որ անշուշտ կայսերական վաւերացման պիտի արժանանայ. Երկրորդ յանձնաժողովն որ կը զբաղէր Ֆինլանտիոյ թղթատարական վարչութիւնը ռուս Տէրութեան թղթատարական վարչութեան հետ ձուլել՝ յաջողեցաւ կայսերական Ուքազ մը ձեռք բերել, որով ռուսական թղթատարութեան դրոշմ ի մօտոյ պիտի մուծուի Ֆինլանտիոյ մէջ. Ռուսիոյ ելեւմտից նախարարին առաջարկութեամբ, Ֆինլանտիոյ ուրոյն ոսկեդրամը պիտի ջնջուի, և անոր տեղ ռուսական արծաթ րուպլ պիտի մուծուի. բայց Ֆինլանտացիք պարտաւոր պիտի լինին ռուսական թղթադրամն եւ ընդունիլ՝ Լոնտոնի գնոց համեմատ ամիսն անգամ մը պաշտօնապէս որոշեալ գնով. Այս կերպիւ շատ չանցած Ֆինլանտիա պիտի ողողի ռուսական թղթադրամով, եւ արծաթ րուպլ չպիտի մնայ հրապարակի վրայ. Ռուսեւֆիննական արծաթ րուպլը մէկ կողմն վրայ ֆիննական նկար պիտի ունենայ. Ֆինլանտիա իրեն յատուկ մաքսային դրութիւն մ'ալ ունի, զոր Ռուսիա կը մտադրէ քիչ քիչ ջնջել, և այս զգուշութիւնն ի գործ կը դնէ ո՛չ թէ ի սէր Ֆինլանտացւոց, այլ ի սէր կարգ մը ռուս վաճառականաց որք արդի կացութեան մէջ շահեր ունին, մանաւանդ թղթի գործարաններ, որք ֆիննական մաքսիդրութենէն նպաստաւորեալ են մեծապէս.

Աւելորդ է նշանակել թէ ֆինլանտական լրագիրք ազդու բողոք կը բառնան Ֆինլանտիոյ ինքնօրինութեան զանազան կէտերուն այսպէս մի […] ջնջման դէմ.

ԱՒՍՏՐԻԱ — ՀՈՒՆԳԱՐԻԱ

Աւստրեան թղթադրամ փիորինն, երկու տարիէ հետէ անկեալ վիճակ մ'ունենալէ յետոյ, տակաւ կը բարւոքի, և կը բարձրանայ. Անգլ. ոսկին որ 1888 յունիս ամսուն աւստրեան թղթադրամով 12 փիորին 50 քրէյցէր կ'արժէր, անցեալ երեքշաբթի 11 փիորին 35 քրէյցէր արժեց, և յոյս կայ թէ մինչեւ վեց ամիս 10 փիորինի թղթադրամ հաւասար պիտի լինի անգլ. ոսկւոյ մը. Որովհետեւ երկու տարիէ հետէ կեանքի պիտոյից գնոյն նուազում չէ պատահած Աւստրիոյ մէջ, այլ՝ մաքսերու բարձրացման պատճառաւ՝ ապրուստ եւս սուղցած է միշտ, ոսկւոյ գնոյն անկումէն սաստկապէս կը զգածուին նոքա որք կանոնաւորապէս մետաղեայ դրամ կ'ընդունին Անգլիայէն, Գերմանիայէն և Ֆրանսայէն: Օրինակի համար, նափոլէոն ոսկին որ երկու տարի յառաջ 10 փիորին կ'արժէր, այժմ 9 փիորին եւեթ կ'ընէ թղթադրամով. Աւստրեան լրագիրք յորդոր կը կարդան կառավարութեան՝ օգնել քաղել ոսկւոյ անկումէն, կամ լաւ եւս՝ թղթադրամին յարգ գանելէն, և միանգամ ընդ միշտ բարենորոգելով Տէրութեան դրամական շրջաբերութիւնը, բառնալ թղթադրամը. Վիեննայի կառավարութիւնն իւր մասին յօժարամիտ է սոր, բայց կը հակառակի մաճառ կառավարութիւնն, ըստ որում Հունգարիոյ արմտեաց և դուարաց արտածիչք մեծապէս շահաւոր կը համարին թղթադրամ վճարել իրենց բանւորներուն, մինչ իրենք ոսկի կ'ընդունին օտար երկիրներէն ի փոխարէն իրենց ցորենին և կովերուն.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՄՏԵԱՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հունգարիոյ երկրագործական նախարարին հրատարակած վիճակագրէն կ'երեւի թէ այս տարի աշխարհիս ցորենի հունձքն է 725 միլիոն հարիւրալիտր. (Մէկ հարիւրալիտր՝ 78 քաշ օսմ.) Ցորեն գնող երկրաց պէտք է 123 միլիոն, որոյ դէմ տրամադրելի կը համարուի 148 միլիոն. Նախարարը կը պնդէ սա իրողութեան վրայ թէ մթերեալ ցորենի նուազութեան պատճառաւ, անմիջական պէտքէն յաւելեալ մասը փոքր է բաղդատմամբ ցորեն գնող գլխաւոր հրապարակաց պէտքերուն.

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Լոնտոնի լրագիրք պաշտօնապէս կը ծանուցանեն թէ Մահարաճա կամ Հնդիկ իշխան Տուլիփ-Սինգ 1886էն ի վեր անգլ. կառավարութեան դէմ բռնած թշնամական ընթացքին համար խորին ցաւ յայտնած լինելով, Վեհ. Թագուհին, իւր նախարարաց խորհրդով, բարեհաճած է ներում շնորհել անոր. Մահարաճան, որ հիւանդ ինկած էր ի Փարիզ, ի մօտոյ Անգլիա պիտի վերադառնայ. Այս մարդ, 1838ին ծնեալ, որդի է հռչակաւոր Ռունճիթ-Սինգի, Փէնճապի Ռաճային կամ թագաւորին. Հնդկաստանի Փոխարքայ Տալհուզի մարքիզ գրաւելով այն թագաւորութիւն, տարեկան 40 հազար անգլ. ոսկի նշանակած յատկացուց գահազուրկ իշխանին. Իւր որդի Տուլիփ-Սինգ Անգլիոյ մէջ դաստիարակուեցաւ, քրիստոնէութիւն ընդունեց, և 1864ին Անգլուհւոյ մը հետ ամուսնացաւ. Անկէ ի վեր երկրորդ ամուսնութիւն կնքեց. Իրեն համար գնուած մեծ ագարակի մը մէջ իշխանավայել կեանք կը վարէր, և Անգլիոյ Երեսփ. Ժողովոյն ընտրելի հանդիսացաւ. Բայց շռայլութեամբք իւր ստացուածքը փճացուց, պարտուց ներքեւ ինկաւ, և որ մ'ալ յանկարծ Ռուսիա երթալով, ինքզինք ռուս կառավարութեան տրամադրութեան ներքեւ դրաւ՝ զՀնդկաստան Անգլիոյ դէմ ապստամբեցնելու համար. Բայց իւր գրգռիչ յայտարարութիւնք արձագանգ չգտան ի Հնդկաստան.

ԻՌԼԱՆՏԱ

Իռլանտայի երկրագործք, այսինքն բովանդակ իռլանտացի ժողովուրդն, յուզման մէջ են. Փաթաթէսի հունձքը գէշ է. Վախ կայ թէ բոլորովին պիտի փճանայ փաթաթէսի հունձքն, որ Իռլանտայի հողային մեծագոյն հարստութիւնն է և ժողովրդեան ապրուստի գլխաւոր միջոցն. Աւելի փաթաթէս քան ցորեն կամ հաճար կ'ուտեն Իռլանտացիք, և, փակագծի մէջ, փաթաթէսով ուտեստի ազդեցութեան կը վերագրուի իռլանտացի ժողովրդեան դիւրագրգիռ բնաւորութիւնը. Իռլանտայի արեւմտեան ծովեզերաց բովանդակ երկայնութեամբ, Տօնէկալի գաւառէն մինչեւ Քէրրի գաւառը, մանաւանդ ի Կալուէյ և ի Մէյօ, և արեւելեան եզերաց մէկ մասին վրայ, փաթաթէսի տունկին մէջ թունաւոր հիւանդ մը սկսած է երեւիլ, յորմէ փրկել փաթաթէսները փճացնել հարկ կը լինի. Կղզեցւոց և կղզւոյն անգլ. կառավարութեան մեծագոյն խնդիրն այս է այժմ, որովհետեւ ուրիշ անգամներ այս երեւոյթ լայնատարած սովու մը ստոյգ նախաշաւիղն եղած է.

— 16 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆԿՈՒՄԸ

Սոսկալի պայքար մը կը մղուէր իր մէջը. Ի վերջոյ, մայրական սէրն, որ քիչ մը սրտին եսասիրութիւնն է նաեւ, գերակշռեց միւս ներհակ բոլոր զգացումները. Որոշեց աղջկանը հետ մեկնիլ.

Ամէն միջոցներ ձեռք առաւ՝ յանկարծակիի չգալու և իր փախուստին մէջ չի բռնուելու համար.

Մեկնելէն առաջ Լասէռի կոմսին գըրած նամակն յայտնի է մեզ. Գիտենք նաեւ թէ մեկնած էր գրեթէ առանց դրամի և իր գոհարեղէններէն ոչ մին հետը տանելով.

Օր մը, կէս գիշերէն առաջ, իր կուրծքին վրայ սեղմած պզտիկ Լիւսին, սեւ մետաքսէ մուշտակապատ մեկնոցի մը մէջ փաթթուած և ուղեւորութեան պզտիկ մախաղ մը ձեռքը, գաղտագողի դուրս ելաւ ապարանքէն, առանց դռնապանը կամ սպասաւորներէն մին ամենադոյզն աղմուկ մը լսելու. Արագ քայլերով, գընաց դէպի Ֆոպուռ-Սէնթ-Օնորէ փողոցն, ուր կառք մը կ'սպասէր իրեն.

—Օրլէանի կայարանն, ըսաւ կառապանին.

—Մեկնմա՞ն կողմը.

—Այո.

Կէս ժամ յետոյ կը միանար իր սիրահարին հետ, որ միայնակ գացած էր Օրլէանի կայարանը. Կէս գիշերը քառասուն անցած կառախումբ նստան. Բայց ո՛չ Թուլուզ կ'երթային, ո՛չ Պորտօ. Կանգ պիտի առնուին ի Վիէռզոն, և անկից Պուապոնէի գծով Լիոն երթալով, Իտալիա պիտի ուղեւորէին.

Ժ

ՄԱՐՔԻԶՈՒՀԻՈՅՆ ՏԱՆԸ ՄԷՋ

Լասէռի կոմսն որոշած էր անմիջապէս ի խնդիր ելլել իւր կնոջ կամ մանաւանդ աղջկանը, և երդում ըրած էր հանգիստ չառնուլ մինչեւ որ չգտնէր և մօրը ձեռքէն չխլէր զայն.

Ապահովապէս, կոմսուհին Բարիզ չէր մնացած. հաւանական էր նաեւ որ Ֆրանսայի սահմանագլուխն անցած ըլլար. Կոմսը գացած էր Լիոնի փողոցը, կայարանին մօտ, որպէս թէ գուշակած ըլլար որ, իր կնոջը հետագօտութեանն սկսելու համար, Բարիզ-Լիոն-Միջերկրականի մեծ երկաթուղին պիտի նստէր.

Գիշերուան մնացեալ մասն անցուց կահուորեալ պանդոկին մէջ, որուն առջեւ կառքը կանգ առած էր. Անկողին չմտաւ. Անյարդար թիկնաթոռի մը մէջ փռուած, սիրտն և հոգին խռովատանջ, այսու հանդերձ հանդարտ, ամէն տեսակ մռայլ խորհրդածութեանց մէջ խորասուզուած էր.

Ժամն իննին Պ. Գոռվիզիէի մօտ գընաց. Գրասենեակը նոր բացուած էր, գըրագիրները դեռ աշխատութեան սկսած չէին. բայց, արդէն երկար ատենէ ի վեր, նոտարն իր դահլիճին մէջ էր.

Աստ չպիտի կրկնենք Պ. տը Լասէռի և Պ. Գոռվիզիէի միջեւ անցած դարձածը. Ընթերցողն համառօտակի իմացած է զայդ սեղանաւոր Վան Օսսէնի և նոտարին խօսակցութենէն.

Իր հրամանները տալէ յետոյ, Պ. տը Լասէռ բաժնուեցաւ Պ. Գոռվիզիէէն ըսելով.

—Ապահովապէս Բարիզէն պիտի մեկնիմ երկու երեք օրէն և չեմ գիտեր թէ երբ պիտի տեսնեմ զձեզ.

Բռովանս փողոցէն, կոմսը գնաց Վառէն փողոցը, Մոնբէռէի ապարանքը. Մարքիզուհին միայնակ գտաւ իր փոքր ապարանքին մէջ.

—Սիրելի կոմս, ըսաւ նմա մարքիզուհին, հաճելի անակնկալ մը կը պատճառէք ինծի. չէի սպասեր բնաւ ձեր այսչափ կանուխ այցելութեան. Անշուշտ եմ որ ինծի ըսելիք կամ հարցնելիք բան մը ունիք. Ինչի՞ վրայ է գործը.

Յետոյ յանկարծ նշմարելով որ կոմսը տժգոյն էր, դիմագծերը կծկուած էին և նայուածքը մոլորուն.

—Աստուա՛ծ իմ, շարունակեց անհանգիստ ձայնով մը, ի՞նչ ունիք. Զարշուք դիմաւորութեան մը վրայ մտածող մարդու մը դէմքն ունիք. Ի՞նչ պատահեցաւ, ըսէք. Ա՜հ, Տէ՛ր Աստուած, մեր սիրելի պզտիկ Լիւսին... արդեօք կորսնցուցի՞ք զայն.

—Այո, կորսնցուցի, պատասխանեց կոմսը խորունկ ձայնով մը.

—Ի՜նչ դժբաղդութիւն, ի՜նչ դժբաղդութիւն... Ա՜հ, հիմա կը հասկնամ թէ ելէն ինչո՛ւ երէկ զիս տեսնելու չեկաւ.

Կոմսը գլուխը թօթուեց.

—Չէ՛, տիկին մարքիզուհի, ըսաւ, չէք հասկնար. Բոլորովին ուրիշ պատճառաւ մըն էր որ երէկ Լասէռի կոմսուհին չեկաւ.

—Կոմս, կը սարսափեցնէք զիս ձեր ողբերգական դէմքով. կը պաղատիմ, բացատրեցէք.

Պ. տը Լասէռ գրպանէն թուղթ մը հանեց և մարքիզուհւոյն երկնցուց զայն ըսելով.

—Կարդացէք.

Կոմսուհւոյն նամակն էր այդ.

Մարքիզուհին արագարար կարդաց զայն. Բայց, վերջին տողերուն հասնելէ առաջ, աւելի կերպով տժգունած էր և բոլորովին կը դողդղար.

—Օ՜հ, տարաբա՛ղդը, տարաբա՛ղդը, ըսաւ տկար ձայնով մը.

—Ամէն բան գիտէք հիմակ, տիկին մարքիզուհի.

—Ուրեմն մեկնա՞ծ է հիմակ.

—Այս նամակը գրելէ մէկ վայրկեան յետոյ անշուշտ.

—Աղջիկը հետը մեկնա՞ծ տանելով.

—Այո՛, թշուառականը, հետը տանելով ո՛չ թէ իր աղջիկը, — ա՛լ արժանի չէ՛ մայր ըլլալու, — հապա ի՛մ աղջիկս, իմ զաւակս, իմ միա՛կ գանձս.

—Ահռելի բան է այդ.

—Ձեր բարեր պատիւս ձեռքէս առնել, առ յաւէտ թշուառութեան և ամօթի դատապարտել զիս, պէտք էր նաեւ որ սրտիս ամենէն ահռելի հարուածը տալու միջոցը գտնէր. իմ աղջիկս գողցա՛ւ ձեռքէս.

—Բայց ըսել է խենդեցեր է այդ տարաբաղդ կինը.

—Չէ՛, անարգ էակ մըն եղեր է միայն.

—Աւա՛ղ, դժբաղդութիւնն անհուն և անդարմանելի է.

—Ոչնչութեան մէջ խորասուզած է զիս.

—Կը հասկնամ ձեր յուսահատութիւնը. Բայց կը յուսամ որ անձնասպանութիւնը մտքերնուդ չէք անցուներ.

Կոմսին աչուըները կրկին շողեր արձակեցին.

—Ինքզինքս սպաննե՛լ, ե՛ս, բացագանչեց. Հապա աղջի՞կս.

—Որոշում մը տուա՞ծ էք.

—Այո.

—Ի՞նչ պիտի ընէք.

—Պիտի սկսիմ փնտռել այդ նզովելի արարածը. Պէտք է որ զինքը գտնեմ, պէտք է, նոյն իսկ եթէ ասոր համար հարկ ըլլայ բոլոր հարստութիւնս վատնել. կ'ուզեմ աղջիկս ետ առնել իրմէ.

—Համամիտ եմ ձեզի.

—Երէկ, ձիերս և կառքերս ծախեցի, բոլոր սպասաւորներս ճամբեցի եւ ապարանքէն ելայ. այսօր իսկ, նոտարս ծախու կը հանէ զայն. Կոմսուհւոյն դէպի ո՛ր կողմ գացած ըլլալը գիտնալուս պէս ետեւէն պիտի երթամ.

—Դժուար պիտի ըլլայ գտնելը.

—Պարագաներէն կախումն ունի. Պէտք է ըսեմ որ հոս եկած եմ այն յուսով թէ պիտի օգնէք ինծի.

—Ի՞նչ կերպով. Միջոց մը չեմ տեսներ.

—Կոմսուհին մեկնած է առանց իր գոհարեղէններուն, առանց ճերմակեղէնի, առանց զգեստի և շատ քիչ դրամով.

—Ա՜հ.

—Ուրեմն ակներեւ է թէ կ'երթար միանալ իր սիրահարին հետ, որպէս զի երկուքն ի միասին ապրին առաւել կամ նուազ մենաւոր կամ ծածուկ տեղ մը.

—Աւա՛ղ, ինծի ալ ակներեւ կ'երեւայ այդ.

—Նմանապէս յայտնի է թէ այդ մարդ հարուստ է. Ո՞վ է. Թշուառական մը որուն կինս հանդիպած է ընկերութեանց մէջ, թերեւս ձեր տունը, տիկին մարքիզուհի.

—Օ՜հ, կոմս, ըսաւ մարքիզուհին, որուն ճակատը ծածկուեցաւ սաստիկ կարմրութեամբ.

(Շարունակելի)

ՎԻՔԹՈՐԻԱ ՆԻԱՆԶԱ

Այս մեծ լճին կէսն Անգլիոյ, կէսը Գերմանիոյ կը պատկանի, ըստ անգլեւ-գերման կարգադրութեան։ Պ. Սթէնլի ի մօտոյ սոյն լճի վրայ պիտի սկսի բանեցնել իւր նորապսակ ամուսնոյն անուան նուիրեալ շոգենաւ մը, Դօրօթի Թէննէնթ։ Գերմանք չեն ուզեր Անգլիացիներէն ետ մնալ, և Վիսման հազարապետ յորդոր կը կարդայ իւր ազգայնոց որ փութան Անգլիացիներէն առաջ իրենց ազգային դրօշը պարզել Վիքթորիա Նիանզայի ջուրց վրայ, ուստից, ինչպէս և Ալպէրթ Նիանզա լճէն, կը բղխի Նեղոս։

ՄԱՆՇԻ ԾՈՎ

Անգլիացիք մեծաւ բերկրութեամբ ողջունեցին ամերիկացի քաջ լուղորդն Տալթըն, որ Մանշի ծովուն ֆրանսական եզրէն անգլիական եզրն անցաւ [illegible] լողալով, 23 ժամէն։ Բայց ցամաք ելնելուն պէս յոգնութենէն մարեցաւ ինկաւ, և տաք բաղնիք մը փոխադրելով, կազդուրեցին զինք։ Նաւակ մը կը հետեւէր ծովուն վրայ, և մի հիւթ ուտելով սընունդ կ'առնուր լուղորդն։ Մեծ պարգեւ մը ստացաւ։ Տալթըն 38 տարեկան մարդ է։ 13 տարեկանէն ի վեր կը լողայ։ Իւր կին և դուստր ևս քաջ լուղորդներ են։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական և Քաղաքական Ժողովներն, երէկ իրիկուն իրենց ուղղեալ հրաւէրի մը վրայ, այս առաւօտ Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հօր տունը գնացին ի Մաքրի-գիւղ, ուր խորհրդակցութիւն մը պիտի ունենան Ն. Ամենապատուութեան հետ։

ՓԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՆՈՒՑՈՒՄ

Ուսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ազգային վարժարանց մէջ գործածելի դասագրոց վիրաքննութեան հարկ տեսնուած և Քննիչ Մասնախումբ մը կազմուած լինելով, Ուսումնական Խորհուրդս այսու ծանուցմամբ կը հրաւիրէ այն պատուարժան հեղինակներն՝ որ դպրոցական դասագրքեր պատրաստած են, որպէս զի հաճին իրենց աշխատութիւններէն վաւերացեալ կամ անվաւեր մի մի օրինակ յանձնել Խորհրդոյս մինչեւ տասն եւ հինգ օր։

Այս առթիւ Խորհուրդս կարեւոր կը համարի ազդ. առնել որ պատուարժան հեղինակք երբ վարժարանց համար ո՛ և է դասագիրք պատրաստելու կը ձեռնարկեն, ձեռագիրը նախապէս յանձնեն Խորհրդոյս, և դասական ուսմանց վրայ՝ ըստ պատկերի, կարեւոր հրահանգներն ստանան, որպէս զի, յետոյ, ո՛ և է դժուարութեանց չհանդիպին։

Ծանուցմանս թուականէն յետոյ տպագրեալ դասագրքեր, երբ ներկայացուին, ուշադրութեան չպիտի առնուին։ (Կնք.)

16 օգոստոս 1890

Կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ նորընծայ Տ. Յովհաննէս քահանայ Մանդակունի, որուն քահանայական ձեռնադրութեան քառասնօրեայն կը լրանայ յառաջիկայ կիրակի, նոյն օրը իւր անդրանիկ Պատարագը պիտի մատուցանէ Բանկալթիի գերեզմանատան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ։

ԱԶԴ

Բերայի Կրթական Խնամակալութիւնը կը փութայ ծանուցանել սրբոյ հասարակութեան թէ Թաղիս Ներկեան, Լուսաւորչեան, Արշակունեաց և Մեսրոպեան վարժարանք պիտի վերաբացուին ամսոյս 27ին, երկուշաբթի օրը. իսկ աղջկանց Արհեստագիտական Ուսումնարանն՝ յաջորդ երկուշաբթի, 3 Սեպտեմբեր։

Ուստի կը հրաւիրուին Պատ. ծնողք և պաշտպանք Օգոստոս 20 բշ. օրէն սկսեալ դիմել ի Թաղական Խորհրդարան և ստանալ իրենց զաւակաց ընդունելութեան արտօնագրերն՝ նոյն գործողութեան յատկացեալ պաշտօնէէն, ամեն օր ժամը 2էն մինչեւ 5 (Ը. Թ.)։ Իսկ Արհեստագիտական Ուսումնարանի աշակերտուհիք Տեսչուհւոյն ներկայանալէ վերջ պիտի ընդունին իրենց արտօնագրերն՝ միայն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը նոյն ժամուն։

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

16 Օգոստոս 1890
Բերա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Արտաքին գործոց Նախարարութեան Մէքթուպճի Միւնիր պէյ միանգամայն տնօրէն անուանեցաւ Օտար Մամլոյ դիւանին։

—

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ տեղական մամլոյ դիւանին տնօրէնի օգնական Քոսթաքի պէյի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ Սպայակոյտի հազարապետ Սուպհի պէյի, որդի ընդհանուր սպայակոյտի գեր-նախագահ Ըտհէմ փաշայի։

— —

ԴԱԴԱՐՈՒՄՆ «ՄԻԶԱՆ»Ի

(Պաշտօնէից Տպ. Տեսչութեան)

Միզան լրագիրն անսովոր ընթացից մէջ գտնուած ըլլալով, Նախարարական հրամանաւ այսօրուընէ սկսեալ անպայման կերպիւ դադարման դատապարտուած է։

12 մուհարրէմ 308
16 օգոստոս 306

— —

Ի Բ. ԴՌՈՒՆ

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարն երէկ խորհրդակցութիւններ կատարեցին ինչ ինչ կարեւոր խնդրոց վրայ։

—Սերպիական դեսպան Պ. Նովաքովիչ և հոլանտական դեսպանատան գործակատարն երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

— —

ԽՈՄԱՅԻԼ ՊԷՅ

Բերայի կառավարչութեան նորընտիր օգնական Խոմայիլ պէյ, Նախորդ տնօրէն Թաղապետութեան Նիկոմիդիոյ, երէկ կայս. պալատ երթալով շնորհակալութիւն մատոյց և յետոյ Բերա գնաց և իւր պաշտօնի գլուխն անցաւ։

— —

ՅՈՅՆԵՐՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Յունաց Պատրիարքարանի խառն ժողովոյ կողմէ կարգեալ յանձնախումբն՝ որ պաշտօն ունի խմբագրել Բ. Դրան վերջին Թէզքէրէին պատասխանագիրը, իւր աշխատութիւնն աւարտած ըլլալով, Խառն ժողովն այսօր ի նիստ կը գումարի կարդալու համար պատրաստեալ պատասխանագիրն որ վաղը կամ երկուշաբթի պիտի մատուցուի Բ. Դրան։

Տ. Դիոնէսիոս Պատրիարքը կը պնդէ իւր հրաժարականին վրայ։

— —

«ԼԻՊԵՐԹԷ» ԼՐԱԳԻՐՆ ԵՒ ԿԱՐՆՈՅ ԴԷՊՔԸ

Այս առաւօտ Թ. Հաքիքաթ կ'արտատպէ Փարիզու Լիպէրթէ լրագրոյն մէջ հրատարակեալ նամակ մը որ Պոլսէն ուղղուած է նոյն լրագրոյն։ Այս նամակ կը հերքէ Կարնոյ վերջին դէպքին ինչպէս նաեւ Քիւրտերու հակամարդկային ընթացից և հայոց տառապանքներուն վրայ օտար լրագրաց ոմանց չափազանցեալ հրատարակութիւններն, յարելով որ հայոց այդ տառապանքներ միայն գոյութիւն ունին մարձկան գործիչներու երեւակայութեան մէջ։ Լիպէրթէի նամակագիրն ի միջի այլոց խօսելու կը քննադատէ անգլիական թերթի մը ընթացքը։

Նամակագիրը նոյնպէս կը հերքէ այն լուրը թէ Կարնոյ դէպքին վրայ կայս. կառավարութենէն և հայոց ազգէն բարձրաստիճան պաշտօնատարք ոմանք հրաժարած են և կամ հրաժարելու դիտաւորութիւն ունին։ Այս պաշտօնատարք, կ'ըսէ Նամակագիրը, բաւական հաստատամիտ են չարունակելու իրենց յանձնեալ պաշտօնն ամենայն անձնուիրութեամբ առ օսմանեան կառավարութիւնն։

Այս պաշտօնատարաց հրաժարման լուրն արդիւնք է չարակամութեան այն անձանց որք օսմ. կայսրութեան վարկը կոտրել կուզեն օտար երկիրներու մէջ։ Այս չարակամութեան արդիւնքն ամենէն աւելի Նիւ-Եօրքի լրագրաց միոյն մէջ կ'երեւի։ Այդ լրագիր կ'ըսէ թէ Սուրիոյ ու Լիբանանու ժողովրդեան մէկ մասն, իբր թէ Թուրքերու հարստահարութիւններէն խոյս տալով, Ամերիկա ապաստանած են։ Նիւ-Եօրքի լրագիրը տեսակ տեսակ դէպքեր պատմելով և օսմ. կառավարութեան հետեւած ընթացքին հակառակը ցոյց տալով՝ ժողովուրդը խաբած և բաւական նպաստաւորուած է։ Ոմանք իսկ այդ կարգի խարդախութիւններով պարզապէս հարստութիւն մը դիզած են։

Նամակագիրն իւր խօսքը վերջացնելով կ'ըսէ. «սակայն կը յուսացուի թէ հայերն այդ խաղացուած խաղերու մէջ ճշմարտութիւնը իմանալով, այլ եւս այդ խաղեր չպիտի կրնան չարունակուիլ երկար ատեն»։

— —

ԹԷՐՃԸՄԱՆԸ ՀԱՔԻՔԱԹ
ՀԱՅՔ, ՔՈՒՐԴՔ ԵՒ ՏԷՐՍԻՄ

Թէրճ. Հաքիքաթ, իւր այս առաւօտ թուով, յիշելէն ետքը Լիպէրթէ ֆրանսական լրագրին մէկ թղթակցութիւնն, որ Կարնոյ դէպքին և Հայոց մասին տրուած ինչ ինչ լուրեր կը հերքէ, հետեւեալ կերպիւ կը խօսի «Հայոց դանդատած հարստահարութեանց» վրայ։

«Հայք ամենէն աւելի կը տառապին եղեր ի Տէրսիմ։ Տէրսիմի Քուրդք անհնազանդ են կ'ըսուի։ Ճշմարտութիւնն այն է թէ Տէրութիւնը չէր յաջողած քաղաքակրթութեան լոյսը ծաւալելով բարենորոգել այն կողմեր, որովհետեւ հազիւ 30-40 տարիէ հաստատեալ Թանզիմաթի բարենորոգումներն եւրոպեան քանի մը Տէրութեանց ընդարձակութիւնն ունեցող Վիլայէթներու մէջ ծաւալել դիւրին բան չէր, մանաւանդ երբ խնդիրը Քրդաց վըրայ էր, որք Նէմրոտներու օրէն ի վեր քաղաքակրթութեան երես չեն տեսած։

«Բայց այժմ Անատոլուի բարենորոգմունք տակաւ իրագործուելով, բարեկարգիչ աշխատութիւնք իրենց պտուղը տուած են նոյն իսկ ի Տէրսիմ, և ինչպէս 15 օր յառաջ ծանուցինք, 8—10 քուրդ երեւելիք հնազանդած են, և երէկ ալ գրեցինք թէ 10 քուրդ ցեղապետներ հպատակած են Տէրութեան օրինաց։

«Այս մարդոց վայրագութիւնը քաղաքակրթութեան լոյսէն զուրկ մնալնուն հետեւանք է, ապա թէ ոչ ակներեւ է թէ յատկապէս Հայերն հարստահարելու չար չարելու քաղաքական նրրութիւնները չունին, և հետեւապէս թեթեւամտութեամբ կը մեղանչեն այն թղթակիցք որք գործին քաղաքական գոյն կուտան։

«Չենք ուրանար Տէրսիմի կողմերն ասպատակութեան նման դէպքերու պատահիլը։ Մինչ եւրոպեան երկրաց և նոյն իսկ մեծ քաղաքաց մէջ ոճիրք և չարագործութիւնք քի՞չ կը պատահին որ Տէրսիմի լերանց վրայ կատարեալ բարեկարգութիւն կը տիրէ ըսելու հարկադրուինք։ Աւազակք ոմանք, Հայն և Մահմէտականը չզանազանելով, իրենց քսակը պարարելու համար ասպատակութիւն կ'ընեն, և եթէ այս բանիս քաղաքական գոյն տրուի, առաւելագոյն իրաւամբ կը հետեւի քաղաքական մեկնութիւն տալ Լոնտոնի և Փարիզի մէջ գործուած ոճիրներուն, բան մը որ ծիծաղելի կը դառնայ։

«Մեր ցեղերուն բարենորոգման ամենէն աւելի փափաքողներէն մին ալ Թէրճիմանը Հաքիքաթն է։ Գրասուն մը կրնար կազմուիլ եթէ այս նիւթիս վրայ 10—12 տարիէ հետէ մեր գրած յօդուածք հաւաքուէին։

«Բայց այս բարենորոգմանց կէտն պատակին պէտք է լինի քուրդ ցեղերը մասնակից ընել քաղաքակրթութեան բարեաց և իսլամական ուսմանց ու գաղափարաց ընտելացնել, և այս տեսութեամբ ալ գործը քաղաքական բնոյթ չի կրնար ունենալ։ Եւ արդէն այն կողմանց քուրդ և հայ ազգաբնակութեանց միջեւ քաղաքակրթական տեսակէտով ի՞նչ զանազանութիւն կայ որ մէկ կողմն հարստահարիչ և միւս կողմն հարստահարեալ նկատուին և խտրութիւնք դրուին։ Քաղաքակրթական կեդրոնէն հեռաւորութեան պատճառաւ, տեղական ժողովրդեան երկուքին տարերք ևս՝ բաղդատմամբ ուրիշ նահանգաց՝ շատ յետնեալ վիճակ մ'ունին, ուստի և Տէրութիւնն սկսած է հոգ տանիլ երկուց տարերց ևս միանգամայն քաղաքակրթման և զարգացման։ Այս ջանից արդիւնք աչա կ'երեւին քուրդ ազգէն խմբովին գալով հնազանդութիւն յայտնելն։

«Իրաց այս վիճակին մէջ, չենք ծածկեր թէ մեզ խորին վիշտ պատճառել սկսած է կարգ մը չարամիտ թղթակցաց ընթացքն, որք եւրոպեան լրագրաց մէջ խարէութեամբ կամ չհասկնալութեամբ մեզ դէմ կարգ մը անհիմն ամբաստանութիւններ գրելէ ետ չեն կենար։»

— —

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մէքքէի առողջապահական վիճակին վրայ երկու օրէ ի վեր ո՛ր և է հեռագիր եկած չէ։

Ճիտտէի քարանթինայի քննիչին մէկ հեռագիրը կը ծանուցանէ թէ օգոստոս 14ին՝ տասը և 15ին՝ ութն և մէկ հոգի հնտախտէ մեռած են։

Օգոստոս 11ին Մարտինի և Ճէզիրէի մէջ հնտախտի ո՛և է դէպք պատահած չէ։

Նոյնպէս օգոս. 12ին և 13ին ի Րաւէնտուզ հնտախտի դէպք չէ պատահած, սակայն Մուսուլ քաղաքին մէջ մարդ մը մեռեր է հնտախտի նման հիւանդութենէ։ Այս պատճառաւ տեղական կառավարութիւնն հարկ եղած միջոցներու ձեռք առած է։

Սիւէզէն կը ծանուցանեն թէ Ճիտտէէն ի Թոռ գնացող և հոն քարանթինա սպասողներէն երեք օրուան մէջ 27 հոգի մեռած են և 49 հոգի ալ տեղւոյն հիւանդանոցին մէջ կը գտնուին։

—Սելանիկէն ութ ժամ հեռաւորութեամբ Քարաֆէրիյէ կոչուած տեղւոյն բնակիչք ծանուցած են գաւառին կեդրոնական իշխանութեան թէ հնտախտանման կասկածելի հիւանդութեան դէպք մը պատահեր է։ Իսկոյն բժիշկներ ղրկուեր են որք յետ քննութեան հաստատեր են թէ այդ կասկածելի երեւցած հիւանդութիւնը պարզապէս ժանտատենդ (Թիֆօ) է։

—Լ. Հէրալտ Մարտինի թղթակիցն օգոստոս 11 (Ն. Տ) թուականաւ հետեւեալը կը գրէ.

Շաբաթէ մը ի վեր՝ հնտախտն հետզհետէ կ'աւելնայ այստեղ և քաղաքին մէջ ու շրջակայքը գրեթէ 31 մահեր պատահած են։ Անկարելի է որոշել թիւն այն անձանց որք հնտախտէ բռնուած՝ բայց չեն մեռած. սա միայն յայտնի է թէ մեծ թիւ մը չեն կազմեր անոնք։ Որոշ տեղեկութիւններ առնելու համար բան մը չէ եղած, և հասարակութիւնը կը չատանայ զըրոյցներով։ Այսու հանդերձ քաղաքիս բժիշկն ամեն օր պաշտօնական տեղեկագիր կը պատրաստէ։ Այդ տեղեկագիրք հազիւ կը պարունակեն օրուան մէջ պատահած դէպքերու մէկ չորրորդին կամ կիսոյն յիշատակութիւնը։

Ամեն յարաբերութենէ զրկուած ենք։ Ո՛չ ոք կրնայ հեռանալ քաղաքէն և ո՛չ ոք կուգայ հոն։ Առեւտուրք դադրած են և Մարտինի բնակչաց կըրած վնասները հազարաւոր ոսկիներու կը հասնին։

— —

ՌՈՏՈՍԹՕՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ շաբաթ գիշեր ցաւալի դէպք մը պատահած է Ռոտոսթոյի մէջ։ Ս. Թագաւոր եկեղեցւոյն տարեկան մեծ տօնախմբութեան առթիւ, ամեն կողմէ ի Ռոտոսթօ դիմող ուխտաւորք տեղւոյն զբօսարանաց մէջ զուարճութեամբ կ'անցունէին գիշերուան մէկ մեծ մասը։ Ոստիկանութիւնն այս տարի կը պատուիրէ որ զբօսարանք ժամ 4ին փակեն։ Շահակիցք կը գանգատին սաստկապէս թէ իրենք տարեկան այս մեծ տօնախմբութեան կը սպասէին քանի մը փարա շահելու համար, և այս կանուխ փակումն օրինաւոր վաստակէ մը կը զրկէ զիրենք։ Այս առարկութիւն միւս կողմէ չընդունուիր, թիւրիմացութիւնը կ'աւելնայ, և զբօսարանի մարդոց ընդդիմութեան հակառակ, ոստիկանք և զինուորք նոյն գիշեր մարին հրամանն և կը փակեն զբօսարանաց դուռներն։ Հետեւեալ օրն այս մարդոցմէ վաթսուն հոգի կը ձերբակալուին հարցաքննուելու և պատժուելու համար, և ուրիշ բազմաթիւ մարդիկ ալ կը փնտռուին՝ նոյն առթիւ իրենց ծայրայեղ արարքին ու խօսուածքին վրայ համար տալու դատական իշխանութեան։

— —

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿ

Սթամպուլ կը ծանուցանէ թէ Պոլսոյ Ապահովութեան Սնտուկի հաշուակալի օգնական Ղազարոս էֆէնտի Հովուեան, որ Սնտուկի տնօրէն Սիւլէյման պէյի հրամանաւ իւր պաշտօնէն հրաժարեցուցուած էր, վերստին իւր պաշտօնի գլուխն անցեր է հրամանաւ առեւտրական և հանրօգուտ շինութեանց նախարար Վսեմ. Զիհնի փաշայի, որուն իրաւասութեան տակ կը գտնուի Ապահովութեան Սնտուկը։ Վսեմ. Նախարարը իւր սոյն որոշումը տուեր է, նկատելով որ Ղազարոս էֆէնտիի հրաժարեցուցման համար առաջ բերուած պատճառներն հաստատուած չեն. այսու հանդերձ յանձնաժողով մը կազմեր է, գործը քննելու պաշտօնով։

— —

ՀԱՍՈՅԹԻ ՆՈՐ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Դատական Նախարար Վսեմ. Րիզա փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովն, որ պաշտօն ունի կառավարական հասոյթներն աւելցնելու միջոցները խորհիլ, զբաղած է կարգ մը ծրագրոց քննութեամբ։ Այս ծրագիրք կ'առաջարկեն դրօշմատուրքի ենթարկել սիգարի թուղթերը, խաղի թուղթերը, առեւտրական եւ սեղանաւորական տումարները։ Նոյնպէս առաջարկուած է համեմատական տուրքի մը ենթարկել կաթ տուող անասուններն, ինչպէս նաեւ Համպուրկի վիճակահանութեան նման վիճակահանութիւն մը հաստատել, սակայն աւելի նպաստաւոր պայմաններով։

— —

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՊԷՅ

Համայի ռուսական նախորդ հիւպատոս Կամսարական պէյ Դամասկոսի գեր-հիւպատոս անուանուած ըլլալով, այդ քաղաքն հասեր և իր պաշտօնի գլուխն անցեր է։

— —

ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Նախարարաց խորհուրդը նկատողութեան առնելով Կ. Պոլսոյ քարափանց շինութեան ծրագիրը զոր ներկայացուցած է Ֆրանսայի թղթատարական և հեռագրական նախկին նախարար Պ. Կուանէ, յանուն Միշէլ փաշայի, տեղեկագիր մը մատուցած է ուղղակի Վեհ. Սուլթանին։

(Լը Թէօրք)

— —

Պ. ԶԱՊՊԱՅԻ ԱՐՁԱՆԸ

Բերայի Յունաց Զափիոն վարժարանի հոգաբարձութեան որոշմամբ՝ վարժարանին հիմնադիր Բարերար Պ. Քոնսթանթին Զաբբայի արձանը պատրաստուելով, կանգնուած է վարժարանի մօտիկ սրահին մէջ։

Արձանը բնականէն աւելի մեծ չափով պատրաստուած է։ Պ. Զաբբա ներկայացուած է մտախորհ երեւոյթով մը, ձախ ձեռքը երեսին դրած. կուրծքին վրայ կը նշմարուին այլ և այլ կառավարութեանց կողմէ ստացած պատուանշանները. Ժամանակակից հագուստ մը հագած է, և վրան առած է հելլենական հին վերարկու մը։ Արձանը դրուած է պատուանդանի մը վրայ որուն վրայ ոսկի տառերով քանդակուած է Զաբբիոն անունը։

— —

ՄԵԾ-ԿՂԶԻ

Մեծ կղզիի առջեւ նաւահանգստի մը շինութեան ծրագիրը կղզիներու Թաղապետութեան քննութեան յանձնուած է. շինութեան ծախքը պիտի հոգացուի կղզիներու շոգենաւուց տոմսակի գնոյն վրայ 20 փարայի յաւելմամբ մը, իբր նաւամատոյցի տուրք։ Հաշիւ եղած է որ այս կերպով տարեկան 1500 ոսկւոյ գումար մը պիտի գոյանայ, որուն միջոցաւ չորս տարուան մէջ պիտի վճարուի շինութեան ծախքն՝ իբր 6000 ոսկի։

Սակայն կղզւոյն բոլոր բնակիչք համամիտ չեն ծախուց հայթայթման այս եղանակին։ Շատեր կը վախնան որ շոգենաւուց տոմսակի գնոյն յաւելմամբ դիւրագնացութեան եր Թաղողներու թիւը պակսի և այս պատճառաւ տուներու արժէքն ու վարձքը նուազին։ Այս կերպով մտածողները կ'առարկեն թէ աւելի օգտակար պէտք կայ կարգ մը բարւոքումներ ներմուծել կղզւոյն մէջ, օրինակի համար մեծ կոյանոց մը շինել, որուն պակասութիւնը շատ զգալի է, նոյնպէս ջրհորներ բանալ, եւ այլն։

Կայս. հրամանաւ Իսթիպաց պատուանշանի արծաթ շքադրամը տրուեցաւ ջրհանկիր զօրաց սպաներու ոմանց, ի վարձատրութիւն այն ջանքերու զորս ի գործ դրած էին Օսման Փաշայի հրդեհի պահուն։

—Վիէննայի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Սուպհի պէյ, որ արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ իրիկուն իւր պաշտօնատեղին վերադարձաւ աւստրիական ճեպընթաց կառախումբով։

—Սէլանիկէն կը գրեն թէ մէկ քանի չարագործք բանկցուցեր են քաղաքէն մէկ քանի ժամ հեռու գտնուած [illegible] անուն անասունը, յիսուն տեղէ կրակ տալով։ Արդէն նահանգին միւս կողմերն ևս բաւական անասուններ այրած են։

—Նախընթաց օր Սիրքէճիի գարեջրատանց միոյն բնակիչը՝ Մանուկ, լողալու համար ծովը մտած պահուն խեղդուեցաւ։

—Սպարապետի Դրան պիտոյք հայթայթող վաճառական Սինոս օղլու Սիմոնաքի էֆէնտի 20000 ղրուշ նուիրած է ի նպաստ շինութեան Պրուսայի Իսլահխանէին։

—Բերայի կառավարիչ Հիւսէյին էֆ. ապաքինած ըլլալով, երէկ իւր պաշտօնատեղին գնաց։

—Երէկ ի Թօփգարու Ագապի անուն յիսուն տարեկան հայ կին մը, որ երեք օրէ ի վեր խիթ ունէր, յանկարծամահ եղաւ։ Բժիշկները քննութիւն մը կատարելով [illegible] արտօնեցին։

Սամաթիոյ մէջ ևս Աբրահամ անուն հայ մը երէկ յանկարծամահ եղաւ։

—Քաղաքապետութիւնը վերստին կզբաղի Կ. Պոլսոյ սպանդանոցներու խնդրով։ Քաղաքապետութեան խորհուրդը ծրագիր մը պատրաստած է Բ. Դրան մատուցանելու համար, յորում գործնական միջոցներ ցոյց կուտայ առաջքն առնելու համար այն անպատեհութեանց որք կը ծագին հանրային պատշաճ սպանդանոցներու չգոյութենէն։

—Բ. Դուռն հասած տեղեկութեանց համաձայն՝ Ահմէտ էֆ. անուն անձը որ Սինէքլիի աւազակաց ձեռքը կը գտնուէր տակաւին, ողջ է, և աւազակք Պուրկազի շրջակայքը կը գտնուին այս պահուս։

—Մայրաքաղաքիս պարսկական դեսպան Միրզա Մոհսին խան, որ Մարիէնպատի ջերմուկները կը գտնուի, տասն և հինգ օրէն մայրաքաղաքս պիտի վերադառնայ։

—Նախարարաց Խորհուրդն իւր նախընթաց ասուր նստի պահուն Քաղաքապետութեան առաջին երկրաչափ Մէհմէտ էֆէնտին կոչեր և հրամայեր է նմա ներկայացնել Կ. Պոլսոյ քարտէսը։

—Կայս. Իզզէտտին շոգենաւն, որ նախընթաց իրիկուն Նիկոմիդիա գնացեր էր, երէկ առաւօտ աստ վերադարձաւ։ Նոյն շոգենաւով մայրաքաղաք եկաւ տեղւոյն պահեստի զօրաց հրամանատար Միրլիվա Սաատէտտին փաշա, որ ուղղակի կայս. պալատ գնաց։

—Եղեռնադատ ատեանը վաղը պիտի չարունակէ զբաղիլ Սարրաֆի ոճրագործութեան դատով։

—Դատական Նախարարութեան հրամանաւ՝ Ադր. Պոլսոյ դատական գործոց տնօրէն Ֆէնվէր պէյ Չորլու գնացեր եւ երկու օր չարունակ տեղւոյն նախնական դատարանին նկատմամբ քննութիւններ կատարելէ յետոյ, Ադր. Պոլիս վերադարձեր է։

—Հեռագրական և Թղթատարական վարչութիւնը կը ծանուցանէ թէ Եոզղատի և Սամսոնի միջեւ թղթատարական չաբաթական երթեւեկութիւն մը հաստատուած է։ Թղթատարը պիտի հանդիպի Սունկուրլու, Լատիկ, Զօրում, Մարզուան և Հօզա։

—Մայրաքաղաքիս վաճառականք եւ խանութպանք, 114 ստորագրութեամբ հանրագիր մը մատուցանելով Վեհ. Սուլթանին, շնորհակալութիւն ու երախտագիտութիւն յայտնած են այն Իրատէին համար, որով կենդանիներու տուրքն ըստ կամս թողուած է։

—Ոստիկանութեան պաշտօնեայք չորս գործաւորներ ձերբակալած են իբրեւ հեղինակ Կէօջէեան Վսեմ. Յակոբ էֆէնտիի տան մէջ կատարուած գողութեան։ Այս գործաւորներէն ինչպէս նաեւ տան պաշտպանը՝ գործաւորն Ճիրօ, հարցաքննութեան ենթարկուած են։

Գողօններէն մէկ մասն եւս իտալացիի մը տունէն գտնուած է, որով կը կասկածուի թէ մէկ քանի իտալացիք ևս մասնակցութիւն ունենան այդ գողութեան մէջ։

—Զեռնեկս իշխանութիւնն իմանալով որ Թամար-Պազարճըքի շրջակայ արքունի անտառները քանի օրէ ի վեր կ'այրին, հարկ եղած հրամանները տուած է որոց որ անկ է այդ հրդեհը անմիջապէս մարելու համար։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՎԻԷՆՆԱ, 28 Օգոստ.— Բոլիթիշէ Գօրէսբոնտէնց կը ծանուցանէ թէ Սկիւպի և Օխրիտայի նոր պուլկար եպիսկոպոսաց հանդիսաւոր մուտքն և պաշտօնի գլուխ անցնիլն՝ առանց միջադէպի տեղի ունեցած է, ըստ որում սերպ և յոյն ժողովուրդն ինքնաբերաբար հրաժարեր են թշնամական ցոյցեր ընելու դիտաւորութենէն։ Սկիւպի մէջ, Յունաստանի և Սերպիոյ հիւպատոսները ներկայ չեն գտնուիր Թէոդոսիոս մետրապոլիտին մուտքին։

ԽԱՆ, 18.— Ռօյթէր կը հաւաստէ թէ Կալէտի իշխանը սեպտեմբերի մէջ Պուքրէշ պիտի հասնի, Թագաւորին յանձնելու համար Մեծ պատուանշանը։

ՊԵՐԼԻՆ, 28.— Նորտ Տոյչէ Ալկ. Ցայթունկ կը հաւաստէ թէ լաւատեղեակ աղբերց մէջ լուր չկայ ո՛չ Զարին ի Պերլին ուղեւորութեան վրայ, աշնան մէջ, և ո՛չ ալ Վիլհէլմ կայսեր ու կայսրուհւոյն ի Մոնձա ուղեւորութեան վրայ։

ՓԵՏՐՍՊՈՒՐԿ, 28.—Փեթերպուրկեան Վիէտոմոսթի կ'իմանայ թէ կառավարութիւնն յանձնախումբ մը պիտի հաստատէ զանազան նախարարութեանց, գիտական ընկերութեանց և առեւտրական սենեակներու ներկայացուցիչներէ, ուսումնասիրելու համար ի Կեդր. Ասիա վաճառականութեան ուղիներու զարգացման խնդիրը։ Կը հաւաստեն թէ ելեւմտից նախարարն ի մօտոյ Նիժնիի, Րոստովի, Թիֆլիսի և Պաքուի ճամբով պիտի երթայ Սմրղանտ և Թաշքէնտ. վերադարձին Պաթումէն պիտի այցելէ։

ՊԷԼԿՐԱՏ, 28.—Լրագրաց խօսքին նայելով, կանոնաւոր բանակը ռազմափորձեր պիտի կատարէ սեպտեմբեր 25էն մինչեւ հոկտեմբեր 4։

ՍՈՖԻԱ, 28.—Երկու օրէ ի վեր, Պէլովայի մեծ անտառը կ'այրի։ Ազդու միջոցներ ձեռք առնուած են հրդեհը սահմանափակելու համար։ Հետեւակազօրաց վաշտ մը ղրկուեցաւ անդ։ Կ'երեւի թէ հրդեհն սկսած է օսմանեան սահմանագըլխէն և հովին պատճառաւ սաստկապէս ճարակած է արտասովոր չորութենէն։

—1882-83 պահեստի զօրքերէն մաս մը ի զէն կոչուած է՝ Մանլիխէրի հրացանով տասնեւհինգ օր փորձեր ընելու համար։

ՆԻՒ ԵՈՐՔ, 28. (Ա. Հ. Գ.).— Անգլիոյ և Միացեալ Նահանգաց միջեւ խընդիրը եւս քան զեւս կը ծանրանայ, այնպէս որ մօտալուտ խզում մը անխուսափելի է նէ Միացեալ Նահանգաց համար նպաստաւոր լուծում մը չտրուի ձկնորսային խնդրոյն։

ՄԱԴՐԻՏ, 28.— Սպանիական կառավարութիւնը մօտալիր է իրաւարարի դեր ստանձնել Հոնտուրասի և Սան-Սալվաթորի երկու հանրապետութեանց միջեւ, որոց առաջարկուեցաւ այս իրաւարարութիւն։ Մինչեւ ցարդ անոնցմէ ոչ մին պատասխանած է, սակայն կը գուշակուի թէ պիտի ընդունին։

թիւն և ֆրանսերէնէ ի հայերէն, և հայերէնէ ի ֆրանսերէն պարզ թարգմանութիւն մը.

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ — Գործնական թուաբանութիւն—Չորս գործողութիւնք և սոցա վերաբերեալ խնդիրները. Հասարակ և տասնորդական կոտորակք և սոցա վերաբերեալ խնդիրներ, երեքի կանոն, մեղրական դրութիւն ու երկրաչափական գիտելիք.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ —Պատմութիւն ազգային և ծանօթութիւնք ի վերայ հին ազգաց.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.—Տարերք բնական և քաղաքական աշխարհագրութեան.

Քննութիւնք գրաւոր կերպիւ պիտի կատարուին, Խնամակալութեան կողմանէ կարգեալ յանձնաժողովոյ մը ձեռամբ և արդիւնքը պիտի տեղեկագրուի առ Խնամակալութիւն որ պիտի տնօրինէ, ըստ կանոնագրի, և պիտի հաղորդէ ամեն ծնողաց իրենց զաւկին ընդունուած և կամ մերժուած ըլլալը.

Ցառաջիկայ տարւոյ համար մուտից քննութիւնք պիտի կատարուին հետեւեալ թուականներուն.

Օգոստ. 20, երկուշաբթի օր, առաւօտեան ժամ 9 էն մինչեւ 12, (Ը. Ե.) Հայերէն, Ֆրանսերէն եւ Տաճկերէն.

Օգոստ. 21, երեքշաբթի օր, առաւօտեան ժամ 9 էն մինչեւ 12, Թուաբանութիւն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Կրօնք.

Օգոստ. 22 չորեքշաբթի օր ի ներկայութեան աշակերտաց և ծնողաց. քննութեանց արդիւնքը պիտի ծանուցուին եւ ընդունուող աշակերտաց ծնողաց Խնամակալութեան կողմանէ ապագրութեամբ պատրաստեալ թուղթեր պիտի տրուին զորս նոքա պարտին ստորագրել և վաւերացնել տալ իրենց թաղին Թաղ. Խորհրդէն.

Աշակերտաց տարեկան թոշակն է Լ. Օ. 12, վեցամսեայ կանխիկ վճարելի.

Այն ծնողք որ շատ համեստ դիրք ունենալով չեն կարող վճարել թոշակն, յետ վաւերական վկայութեանց, կիսաթոշակ կրնան տալ իրենց զաւակներն.

Իսկ այն աշակերտք որք բոլորովին աղքատ են և սա Ազգ. Պատրիարքարանի կողմանէ վկայեալ՝ ձրի կ'ընդունուին. Սակայն Խնամակալութիւնն իրեն վերապահած է աղքատ աշակերտաց մէջ ընտրութիւն ընել եւ մուտից քննութեան բարդատարար յաջողագոյն հանդիսացեալներն ընդունիլ ի վարժարան.

Ըստ ներքին կանոնագրի, ամեն աշակերտ պարտի համազգեստ կրել, եւ նոր ընդունուող աշակերտաց ծնողք, լիաթոշակ թէ կիսաթոշակ և թէ ձրի, անխտիր պարտին անմիջապէս պատրաստել տալ համազգեստներն, առանց որոյ ոչ մի աշակերտ կարէ մտնել վարժարանի դռնէն ներս.

Յ. Գ.— Առ ի դիւրութիւն ծնողաց Խնամակալութիւնը մասնաւոր կարգադրութիւն ըրած է դերձակի հետ, ըստ որոյ Լ. Օ. 2 կ'արժէ մէկ ձեռք համազգեստ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Մուտից քննութեան թուականէն վերջ, որ է 20 օգոստոս, ներկայացող աշակերտք չպիտի ընդունուին.

ՍԻԲԵՐԻԱ

Առաջները Հնդիկ, Արաբ, Պուխարացի, Խիվացի և Պարսիկ վաճառականք Նիժնի-Նօվկորոտի հռչակաւոր տօնավաճառին ներկայ գտնուելու համար, կարաւաններով Վօլկա գետին վրայ Քազան քաղաքը կ'երթային և անկից մինչեւ Նիժնի-Նօվկորոտ կ'ելլէին. Ռուսիա սոյնց հետեւած ճամբուն վրայ Անդրկասպեան երկաթուղին շինեց, որ կ'երկարի այսօր ռուսական միջին աճեցուն ստացուածոց մէջ. Այս երկաթուղին կը կապէ Կեդրոնական Ռուսիան Կեդրոնական Ասիոյ և Չինաստանի սահմանագլխոյն հետ, և Մոսկուան ու Բեդերսպուրկը Հնդկաստանի Նաւահանգիստներուն հետ.

Այժմ Ռուսիա մի միայն Անդրսիպերեան երկաթուղւոյ մը իրագործման կը մտածէ, որով Մոսկուան Խաղաղական Ովկիանոսին հետ պիտի կապուի. Ուրալէն անցնող երկաթուղեաց Չլաթաուստի գիծը պիտի յառաջանայ Սիպերիոյ մէջէն և չինական սահմանագլուխը քերելով, Ճարոնի ծովուն մէջ չինական Գօրէա թերակղզւոյն հիւսիսային կողմը գտնուող ռուսական Վլատիվօսթօք քաղաքը պիտի յանգի.

Այս մեծ խորհուրդն իրագործելով Ռուսք տեղական պէտք մը գոհացնելէ զատ վաճառականական, քաղաքական և ռազմագիտական կարեւոր պահանջմանց վերջ կուտան. Եթէ աշխարհացոյց տախտակ մը դիտենք, ամենէն առաջ ռուսական ստացուածոց անհունութիւնը կը նշմարենք. յԷրաւէ Բիձորիկէն, Եւրոպական Ռուսիոյ ամենէն արեւմտեան կէտը, մինչեւ Արեւելեան հրուանդանը, Պեհրինկայի ջրանցքին մէջ, 170 աստիճանի երկայնութիւն մը կայ որ գրեթէ երկրագունդին կէսն ըսել է. Այդ ահագին կայսրութիւն ջրաբաշխական աքանչելի դիրք մ'ունի, որ հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք կ'անցնին, և գրեթէ միշտ լայն ու նաւարկելի են. Սակայն այդ գետերուն թափած ծովերէն ոչ մին ազատ է. Սառուցեալ Ովկիանոսը գրեթէ տարւոյն մի մեծ մասը սառած է. Պալթիկ ծովը դանիական ջրանցքներով գոցուած է, և Սեւ ծովը Վոսփորն ու Տարտանէլը ունի իբր աչքեր. Կասպիցը արդէն լիճ մ'է. Միակ ազատ ծովը որ կը թրջէ Սլաւներու երկիրը Խաղաղական Ովկիանոսն է, և դէպ այն Ովկեան պիտի ուղղուի նոր երկաթուղին որ պիտի կապէ Զարին մայրաքաղաքը Վլատիվօսթօքի հետ. և ինչո՞ւ չը կարծենք թէ ապագային Ռուսիա հոն նաւարան, նաւահանգիստ և Խաղաղականի մեծ նաւատորմիղ մը չը պիտի շինէ.

Եթէ Սիպերիոյ անունը լսենք, ընդհանրապէս անծայր, անջրդի, անապատ, և ձեան մշտնջենական սաւանով մը ծածկուած դաշտերու յաջորդութիւն մը կ'ըմբռնենք. Սակայն այդ կարծիքը սխալ է, մանաւանդ հարաւային Սիպերիոյ համար որ ընդհակառակը բարեբեր, անտառախիտ, արեւելեան մասը լեռնոտ, և լայն գետերով ոռոգեալ է, աւանք բազմաթիւ և քաղաքները բազմամարդ են, իսկ հողը պղնձի, երկաթի և ոսկւոյ հանքերով հարուստ է. Եւ ըստ մեծի մասին այս հարստութիւնները փոխադրելու համար պիտի շինուի Անդրսիպերեան երկաթուղին որ 8000 հզմ. էն աւելի երկայնութիւն պիտի ունենայ.

Այն Մոսկուացի վաճառականք որք գործ ունին Խաղաղականի այդ ափանց վրայ, երկու ճամբայ ունին հոն երթալու համար. Օտեսայէն նաւով Սուէզ, Սինկաբուր և Ճարոն կ'երթան, և կամ Վօլկայէն կ'իջնեն մինչեւ Քազան, և հոն երկաթուղւով Եքաթէրինպուրկ կամ Չլաթաուստ կ'երթան, և անկից ամբողջ Սիպերիան Թարանթաս կոչուած սուղալի կառքերով կ'անցնին. Այս ճամբորդութիւնը երեք ամիս կը տեւէ. Թարանթասք երկար կառքեր են և ետեւնին մէկ մէկ ամպհովանի ունին. սոյնց մէջ պառկողը մէկ մը յաջ մէկ մը ձախ միշտ գլորման դատապարտեալ է. այստեղի գաղթականաց կառքերուն յար և նման է. Լաւ Թարանթաս մը 3 մեթր երկայնութիւն ունենալու է.

Անդրսիպերեանը բազմաթիւ կարեւոր քաղաքներէ պիտի անցնի որոց առաջինն է Օմսք (25,000 բն.) որ Ստեբ կոչուած անջրդի վայրերու կուսակալութեան մայրաքաղաքն է. յետոյ կուգայ Թոլիվան, որուն մօտէն կ'անցնի Օպի գետը յորում միշտ կ'երթեւեկեն աքսորելոց նաւերը. Շոգենաւներ կը քաշեն այդ նաւերը որք կրնան 7-800 դատապարտեալ պարունակել. կամուրջին վրայ վանդակապատ սենեակ մը կայ ուր կը կենան բանտարկեալք. այդ վանդակին չուրջը բոլորաձեւ նեղ ճամբու մը մէջ կը հսկեն ռուսիկան զինուորք. Ցետոյ երկաթուղին յաջորդաբար կ'անցնի Մարինսք և Քրասնօվիարսք քաղաքներէն և կը հասնի Արեւելեան Սիպերիոյ կուսակալութեան մայրաքաղաքը՝ Իրքուցք. Այս քաղաքէն անդին Պայքալ լճին եզերքը կը բոլորէ. Այդ լիճը Ասիոյ մեծ լիճերուն կարգը կը դասուի, և մասամբ իւիք ծով անուան արժանի է. արդարեւ 31400 ք. հզմ. տարածութիւն և 400-1200 մեթր խորութիւն ունի. Եզերքն ընդհանրապէս սեպացեալ և բազմաթիւ կղզեակներ կան. ամենէ մեծ կղզեակն է Օլխօն 68 հզմ. երկայնութեամբ և 24 հզմ. լայնութեամբ. Երկու գետեր կը թափին անդ, Սէլէնկա և Պարսին. Մինչդեռ Անկարա գետակը ծորակի տեղ կը ծառայէ և Պայքալ լիճը Եէնիսէ գետին հետ կը կապէ, որ Սառուցեալ Ովկիանոսը կը թափի.

Անկարայի վրայէն անցնելէ յետոյ Անդրսիպերեան երկաթուղին մինչեւ Բուլարօրովքա մի և նոյն ուղղութեամբ կ'ընթանայ. յետոյ Նիժնի-Թօղլիւք քաղաքէն և Ցէմիտօֆ բնտանիքին հարուստ հանքերէն կ'անցնի, ուր գլխաւորաբար երկաթի հանածոյ կը հանեն բաց օդին. Նիժնի-Թօղլիւք 20,000 բնակիչ ունի և կարեւոր աւան մ'է բազմաթիւ գործարաններով. Քաղաքին կեդրոնը մեծ հրապարակի մը վրայ կը բարձրանայ Մեծն Պետրոսի ու սիրելւոյն Ցէմիտօֆ իշխանին արձանը, որ և քաղքին հիմնադիրն եղած է. Այս վայրին մօտ է նաև դանաձար կոչուած քարին հանքը որ հնոցհետէ նուաղելու վրայ է և որուն քիլոկրամը 40-300 ղուրուշի կը ծախուի.

Անդրսիպերեան երկաթուղին յետոյ դէպ ի հարաւային-արեւելեան կողմը կ'իջնէ, Անդրպայքալը կ'անցնի որ մինչեւ Մոնկոլիա տարածուող ընդարձակ երկիր մ'է, և Քարա հանքերուն մէջէն անցնելով Վլատիվօսթօք կը յանգի.

Այդ հանքը որ Ռուսիոյ մէջ տխուր համբաւ մ'ունի թիապարտից կեդրոնատեղի ըլլալուն համար, անջրդի և լքեալ ձորի մը մէջ Եապլօնօ լերանց վրայ կառուցեալ երկու ամրոցներու մէջտեղը կը գտնուի. Բեդերսպուրկէն 6000 և Խաղաղականէն 1000 փարսախ հեռու է. Այդ հովտին խորէն կ'անցնի Քարա գետակը, որուն անցած տեղերը ոսկւոյ հարուստ հանքեր կան. Սոքա Զարին անձնական ստացուածքներն են, և դատապարտեալք կ'աշխատին. սոյնց չէնքը օրէ օր մեծնալու վրայ է որչափ որ նոր ոսկեհանք կը գտնուին. Այդ չէնքերուն մէջտեղն է կառավարչին տունը, տնօրինութեան գրասենեակները, զօրանոցները, որոց չուրջը շինուած են բանտերը և ընդհակողութեամբ գտնուող դատապարտելոց հիւղակները.

Աքսորեալք որք քաղաքական յանցաւորներ կամ մեծ ոճրագործներ են երբեք չըջան ունին Սիպերիոյ մէջ անցնելու. Առաջնոյ միջոցին բանտին մէջ կը պահուին. Երկրորդին ժամանակ առանձին հիւղակներու մէջ կ'ապրին, երբեմն ալ բնտանեօք միասնաբար տանց մէջ, սակայն միշտ աշխատութեան դատապարտեալ են, բանէն կ'ընդունին իրենց օրապահիկը, չէնքին սահմանէն անդին չեն կարող անցնիլ և իրենց գլխին մազերուն կէսը դեր ծուած է. Թէպէտ դարձեալ մեծ առաւելութիւն մ'է այս, որովհետեւ աշխատութենէ ազատ ժամերնուն մէջ իրենց հաշւոյն կրնան գործ տեսնել. Այս երկրորդ շրջանին լրանալուն յանցապարտը [illegible] անուամբ Արեւելեան Սիպերիոյ մէկ կողմը կը ղրկուի ուր կը մնայ մինչեւ իւր կենաց վախճանը.

Բանտարկելոց օրը 3 լիպրա սեւ հաց, 120 կրամ միս, քիչ մը դարի և թէյ կը տրուի. Քաղաքական մեծ յանցաւորք չեն աշխատիր. Եւ այդ անգործութեան մէջ անցելոյն, ներկային և ապագային մտածութեանց հանդէպ երեւակայութիւննին կը խանգարի և կը խելագարին կամ անձնասպան կ'ըլլան. Խնդիրներուն համար մասնաւոր վայր մը չըկայ, որով խելագարութիւնը փութով կը տարածուի դատապարտելոց մէջ.

Աքսորեալք ձմեռը առաւօտեան ժամ 7էն մինչեւ երեկոյեան ժամ 5 (Ը. Ե.) և ամառն 5 էն մինչեւ 7 կ'աշխատին բացօդեայ հանքերուն մէջ. Ոսկեհանք աւազէ և խիճէ թանձր խաւով մը ծածկուած են. Թիապարտից պաշտօնն է այդ սառած խաւը կոտրել և խառնուրդ ոսկին լուացման գործարանաց մէջ փոխադրել. Աշխատութեան միջոցին խաղալիք խստիւ կը հսկեն. արդէն դատապարտելոց շատերը շղթայակապ են.

Տարին չուրջ 200 քիլոկրամ զուտ ոսկի կ'երթայ Զարին սնտուկը Քարայի հանքերէն. Ասկից զատ ընդհրակողութեամբ դատապարտեալներէն ոմանք իրենց հաշւոյն ոսկի կը լուան ու կը ծախեն.

Անդրսիպերեան երկաթուղին իւր ճամբէն դուրս ձգած է կարգ մը կարեւոր քաղաքներ, ինչպէս Թոմսքը, որ 1601ին հիմնեալ և այժմ 35,000 բնակչով քաղաք մ'է, թատրոն մը, գեղեցիկ Մայր եկեղեցի մը և 1888 ին բացուած համալսարան մ'ունի. Այս քաղաքն ալ մասնաւոր գծով մը պիտի միանայ Անդրսիպերեանին. Թոմսք Չինէն եկող թէյի կարաւանաց կեդրոնական հանգրուանն է. Ռուսիոյ մէջ սպառուած թէյին մեծ մասը գրեթէ Կեդրոնական Չինաստանէն կուգայ, որոյ գլխաւոր մթերատեղին Հան-Քէու քաղաքն է, որ Հան-Քիանկ և Եանկ-Չէ-Քիանկ գետերուն իրար կտրած վայրն է. Հոն ռուս վաճառականաց փոքրիկ գաղթականութիւն մը կայ որ տարւոյն թէյը կը գնէ և գետի ճամբով Շանկ-Հայ և անկից ծովէն Թիէն-Ձին կը ղրկեն, որ Չինաստանի մայրաքաղաքին նաւահանգիստն է. Բէքինի մէջ թէյերը ուղտերու վրայ կը բեռցնեն, և մեծ պարիսպին կողի անապատին ճամբով Քիախթա կը ղրկեն, ուրկէ մէկ ձիով փոքր կառքերու մէջ դնելով ամբողջ Սիպերիան կ'անցնին ու Թոմսք կուգան. Կառապանք փասուց և ժամանակի կորուստեան պատասխանատու են.

Քիախթայէն Թոմսք այս ճամբորդութիւնը ընդհանրապէս 4 ամիս կը տեւէ.

Վ. ԳԱԼԲԱՔՃԵԱՆ

ԴԱԳԱՂԻ ՄԷՋ ՏՈՒԱՄ ՄԸ

... Մեռելի կառքը զիս կը տատանէր սալայատակին վրայ. Բոլորտիքս, կառքերու թաւալումն, անցորդներու ոտից ձայնը, խառնաշփոթ աղմուկ մը կը կազմէին զոր դագաղին հնչունութիւնն աւելի կը զօրացնէր. Նախ, բաւական յստակ մտքով հետեւեցայ այն ճամբայներուն որոնցմէ կը տանէին զիս. Ցետոյ տեղ մը կանգ առին, պտտցուցին զիս. հասկցայ որ եկեղեցին էինք. Բայց երբ կառքը նորէն երերալ սկսաւ, բոլորովին կորսնցուցի գիտակցութիւնն այն տեղերուն որոնցմէ կ'անցնէինք. Զանգակներու ժխոր մը ինձ իմացուց թէ եկեղեցւոյ մը մօտէն կ'երթայինք. աւելի մեղմ ու յարատեւ թաւալում մը գուշակել տուաւ ինձ թէ զբօսավայրի մը քովէն կը յառաջանայինք. Դատապարտեալի մը պէս էի զոր տանջանքին տեղը կը տանին. ապուշցած, կ'սպասէի գերագոյն հարուածին որ կ'ուշանար.

Կեցան. հանեցին զիս կառքէն. Եւ իսկոյն աճապարեցին. Աղմուկները դադրած էին. կ'զգայի որ ամայի տեղ մը կը գտնուէի, ծառերու տակ, և լայն երկինքը գլխուս վերեւ. Անշուշտ մէկ քանի անձեր կը հետեւէին յուղարկաւորութեան, պանդոկին վարձակալները, Սիմոնօ և այլք, որովհետեւ փսփսուքներ կը լսէի. Սաղմոսերգութիւն մը ըրին, քահանայ մը լատիներէն կը թոթովէր. Երկու վայրկեանի չափ ոտքի ձայներ լսեցի. յետոյ յանկարծ զգացի որ կը խորասուզէի. և չուաններ կը քսկսուէին կնտնտոցներու պէս դագաղին անկիւններուն որ ճաթած [illegible] ձայն մը կը հանէր. Ալ վերջացած էր. Սոսկալի թաղխում մը նման թնդանօթի հարուածի մը չարժին, և կաւ պայթեցաւ գլխուս ձախ կողմը. երկրորդ թաղխում մը լսեցի ոտքերուս կողմը. ուրիշ մը, աւելի սաստիկ, փորիս վրայ ինկաւ այնչափ հնչուն, որ դագաղը մէջտեղէն ճեղքուած կարծեցի. Եւ մարեցայ.

Ո՞րչափ ատեն այսպէս մնացի, չեմ գիտեր. Ցաւիտենականութիւն մը և րոպէ մը նոյն տեւողութիւնն ունին ոչնչութեան մէջ. ոչ եւս էի. Քիչ քիչ, աղօտ կերպով գոյութեան գիտակցութիւնը նորէն ունեցայ. Դեռ քունի մէջ էի, բայց սկսայ երազել. Մղձաւանջ մ'երեւցաւ այն սեւ վարագոյրին վրայ որ հոն խղոսս կը ծածկէր.

Կը խղդուէի, ակռայներս կը կափկափէին, կը սարսռայի.

Յանկարծ, ամեն բան յիշեցի, զարհուրանքէն մազերս քստմնեցան. զգացի աւելի ճշմարտութիւնն որ սառի պէս մարմնոյս մէջ կը հոսէր, ոտքէս մինչեւ գլուխս. Սթափա՞ծ էի վերջապէս այդ նրուաղումէն որ դիակի անզգայութիւն մը տուած էր ինձ երկայն ատեն. Այո, կ'երերայի, ձեռքերս կը պտտցնէի դագաղին փայտերուն վրայ. Բան մը կը մնար ընելու. բերանս բացի, խօսեցայ, Մառկաթը կանչեցի, բնազդաբար. Բայց ոռնացած էի, և ձայնս, այն եղեւինէ սնտուկին մէջ, այնքան խռպոտ և այնքան սոսկալի ելաւ մ'առած էր որ ես իսկ երկիւղ զգացի. Տէ՜ր Աստուած, ճշմարի՞տ էր ուրեմն, ապրիլս իմացնելու համար խօսէի կամ պոռայի, պիտի չիմանայի՞ն ուրեմն իմ ձայնս. բանտարկուա՞ծ, ճզմուած էի հողին տակ.

Գերագոյն ճիգ մ'ըրի հանդարտելու և խորհելու համար. Բնաւ միջոց չկա՞ր այդ տեղէն դուրս ելլելու. Երազս նորէն կ'սկսէր, դեռ խելքս լաւ մը գլուխս չէր եկած, հորի մը եւ վերէն բիծի պէս երեւցող երկնքի մ'երեւակայութիւնը կը խառնէի իրականութեան այն փոսին ուր կը խղդուէի. Աչքերս խոշոր խոշոր բացած, խաւարին մէջ կը նայէի. Թերեւս պիտի նշմարէի ծակ մը, ճեղք մը, լոյսի կաթի՞լ մը. Բայց հրեղէն կայծեր միայն կ'անցնէին մութին մէջէն, կարմիր պայծառութիւններ կը ծաւալէին ու կ'անհետանային. Ոչի՜նչ. վիհ մը սեւ, անյատակ. Ցետոյ նորէն միտքս կ'ամփոփէի, եւ այդ տխմար անուրջը մէկդի կը նետէի. պէտք էր որ գլուխս վրաս ըլլար, եթէ կ'ուզէի ազատելու փորձ մ'ընել.

Նախ, թուեցաւ ինձ թէ մեծագոյն վտանգն այն հեղձումն էր որ հետզհետէ կը սաստկանար. Անշուշտ, երկայն ատեն կրցած էի մնալ առանց օդի, զի թալուկն (syncope) առկախած էր յիս կենսական պաշտօններու կատարումը. բայց հիմայ որ սիրտս կը բաբախէր, թոքերս կը շնչէին, պիտի մեռնէի շնչահեղձութենէ, եթէ կարելի եղածին չափ շուտով դուրս չելլէի. Նոյնչափ կը վախնայի ցուրտէն, մտածելով որ զիս ալ պիտի պատէր մահացու ընդարմացումն այն մարդոց որք ձիւնին մէջ կ'իյնան այլ եւս չելլելու համար.

Թէպէտեւ կ'ըսէի ինքնիրեն թէ պէտք էր խոհիլ, կը զգայի սակայն յիմարութեան գոլորշիներ որ գանկիս մէջ կ'ելլէին. Այն ատեն, ինքզինքս խրախուսեցի, ջանալով յիշել ինչ որ գիտէի թաղելու եղանակներուն վրայ. Անշուշտ, հինգ տարուան համար վարձուած գետնի մը մէջ էի, ասով յոյս մ'ալ կը կորսնցնէի, զի ատենօք դիտած էի Նանթի մէջ որ հասարակաց փոսին խրամներն անդադար լեցնելով վերջին թաղուած դագաղներուն ոտքերը դուրսը կը մնային. Կը բաւէր այն ատեն փայտերէն մէկը կոտրել և փախչիլ, մինչդեռ, եթէ բոլորովին լեցուած ծակի մը մէջ կը գտնուէի, վրաս ունէի հողի ամբողջ թանձր խաւ մը, որ սոսկալի արգելք մը պիտի ըլլար ինձ. Լըսած էի որ Բարիզի մէջ վեց ոտք խորը կը թաղէին. Ի՞նչպէս պատռէի անցնէի այդ ահագին զանգուածին մէջէն. Նոյն իսկ եթէ յաջողէի կափարիչը ճեղքել, հողը ներս պիտի թափէր, բարակ աւազի պէս պիտի սահէր, ու աչքս եւ բերանս պիտի լնուր. Եւ նորէն մահը պիտի ըլլար վախճանը, գարշելի մահ մը, տղմի մէջ հեղձում մը.

Սակայն ուշադրութեամբ կը շօշափէի չորս կողմս. Դագաղը մեծ էր, բազուկներս դիւրութեամբ կը շարժէի. Կափարիչը բնաւ ճեղք չունէր. Աջ ու ձախ կողմս, փայտերը գէշ հարթուած էին, բայց ամուր և դիմացկուն. Թեւս կուրծքիս վրայէն ծռելով դէպ ի գլխուս կողմն երկընցուցի. Հոն, ծայրի փայտին մէջ վարակ մը (nœud) գտայ որ թեթեւ մը կ'երեւար ճնշմանս տակ. մեծ նեղութեամբ աշխատեցայ, ու վերջապէս հանեցի վարակը, և մատս մէջը խոթելով, հողին հըպումն զգացի, խիղտ, կաւային և թաց հողի մը, բայց օգուտ մը չունէր ասիկա. Կը զղջայի նոյն իսկ այդ վարակն հանած ըլլալուս, որովհետեւ հողը ներս մտած էր. Ուրիշ փորձ մը զիս վայրկեան մ'զբաղեցուց. դագաղին չորս դին ձեռքովս զարկի, գիտնալու համար թէ դիպուածաւ աջ կամ ձախ կողմը պարապ տեղ մը չկա՞ր. Ամեն տեղ ձայնը նոյն էր. Ոտքի թեթեւ հարուածներ տուած ատեն, թուեցաւ ինձ թէ այդ ծայրէն եկած ձայնն աւելի յըստակ էր. Թերեւս փայտին հնչունութիւնն էր պատճառը.

Այն ատեն սկսայ կամաց կամաց թեւերս երկնցնելով կռուփներովս հրել. Փայտը դիմադրեց. Ցետոյ ծունկերս ալ գործածեցի, ոտքերուս և մէջքիս վրայ կրթնելով, ճարճատիւն մը անգամ չլըսուեցաւ. Վերջապէս ամբողջ ուժս դրի, բոլոր մարմնովս հրեցի, այնպէս բուռն կերպով, որ ոսկորներս ճմլուելով կը ճաչէին. Եւ այս միջոցին էր որ ա՛լ խենթեցայ.

Մինչեւ այն ատեն դէմ դրած էի այն խելագարութեան, այն կատաղութեան չունչերուն որք մերթ ընդ մերթ կը բարձրանային յիս, գինովութեան գոլորշիներու նման. Մանաւանդ զգուշացած էի ձայնս հանելէ, զի գիտէի թէ կորսուած էի թէ որ պոռայի. Ցանկարծ սկսայ պոռալ, ոռնալ. Ալ ձեռքս չէր, ցողանջիւնները կ'ելլէին կոկորդէս որուն ուռեցքը կ'իջնէր. Օգնութիւն կը գոչէի այնպիսի ձայնով մը զոր ես ալ չէի ճանչնար, ամեն պոռալուս աւելի կատաղելով, և աղաղակելով թէ չեմ ուզեր մեռնիլ. Եւ փայտը կը քերթէի եղունգներովս, բանտարկուած գայլի մը ջղաձգումներով կը գալարուէի. Ո՞րչափ տեւեց այս ճգնաժամը. չեմ գիտեր, բայց դեռ կ'զգամ անողոք կարծրութիւնն այն դագաղին ուր կը թապըտրկէի, կը լսեմ դեռ մրրիկն այն աղաղակներուն և հեծեծանաց որոնցմով կը լեցնէի այն չորս փայտերը. Բանականութեան վերջին նշոյլ մը մէջ, կ'ուզէի բռնել ինքզինքս, այլ չէի կրնար.

Ցետոյ մեծ պարտասման մը մէջ ինկայ. Մահուան կը սպասէի, ցաւագին քնէութեան մը մէջ. Քարէ էր այդ դագաղը. երբեք պիտի չյաջողէի ճեղքել զայն, և իմ կորստեանս այս ապահովութիւնը զիս կը թողուր անշարժ և անկարող նոր ճիգ մ'ընելու. Ուրիշ տանջանք մ'ալ, անօթութիւնը, միացած էր ցուրտին և շնչահեղձութեան. Կը թալկանայի. քիչ ատենէն, անհանդուրժելի եղաւ այս տանջանքը. Մատովս ջանացի քիչ մը հող ներս առնել իմ բացած ծակէս և կերայ այդ հողն, որով չարչարանքս աւելի սաստկացաւ. Թեւերս կը խածնէի, չ'համարձակելով արիւնելու չափ կոխել, հրապուրուած այդ միսէն, ու մորթս ծծելով ակռայներս հոն խոթելու փափաքով. մ'ալ

Ո՛հ, ի՞նչպէս կ'ուզէի մեռնիլ այդ միջոցին. Ամբողջ կեանքս, ոչնչութիւն զգացած էի ոչնչութենէն, և հիմայ կ'ուզէի, կը պահանջէի. որչափ աւելի մութ ըլլար՝ աղէկ էր. Ի՛նչ տղայամտութիւն, փախնա՛լ այդ առանց երազի քունէն, այդ լըռութեան ու խաւարի յաւիտենականութենէն. Մահը բարի էր որովհետեւ մէկ հարուածով ու ցմիշտ կը ջնջէր էութիւնը. Ո՛հ, քնանալ քարերուն պէս, նորէն կա՛ւ դառնալ, ոչ ե՛ւս գոյութիւն ունենալ.

Խարխափող ձեռքերս մեքենաբար կը չարունակէին փայտին վրայ պտըտիլ. Ցանկարծ, ձախ բութամատս բանէ մը խայթըւեցաւ, և այդ թեթեւ ցաւը զիս սթափեցուց թմրութենէս. Ի՞նչ էր այն. Նորէն փնտռեցի, ու տեսայ որ գամ մ'էր, գամ մը զոր դիաթաղները ծուռ խոթած էին, և զոր դագաղին եզերքը չէին պահեցուցած. Շատ երկայն էր, շատ սուր. Գլուխը կափարիչին մէջ էր, բայց զգացի որ կ'երերար. Ալ այնուհետեւ գաղափար մը ունեցայ միայն, ձեռք անցնել այդ գամը. Աջ ձեռքս փորիս վրայէն անցուցի, և սկսայ տեղէն խախտել զայն. Չէր ելլեր, հասկցայ որ երկայն գործ էր. Միշտ ձեռքս կը փոխէի, զի ձախ ձեռքս գէշ յարմարած ըլլալով, շատ կը յոգնէր. Այսպէս չարաչար աշխատած ատենս, գըլխուս մէջ ամբողջ յատակագիծ մը պատրաստուած էր. Այդ գամը փրկութիւնն էր. Ինչ որ ալ ըլլար, պէտք էր հանէի զայն. Բայց ալ ատենն անցած չէ՞ր. Անօթութիւնը կը յլէր զիս, ստիպուեցայ կանգ առնել որովհետեւ գնորք մը վրաս եկած էր, որ ձեռքերս թուլցուցած ու միտքս դանդաչանաց մէջ էր ձգած. Ծըծած էի արեան կաթիլներն որ բթամատիս խայթուածքէն կը վազէին. Այն ատեն խածի բազուկս, և արիւնս խմեցի, ցաւէն մղուած և ուժ առած այդ գաղջ ու լեղի գինիէն որ բերանս կը թրջէր. Եւ երկու ձեռքովս նորէն քաշեցի գամն, ու հանեցի այս անգամ.

Ալ ապահով համարեցայ յաջողութիւնը. Պարզ էր յատակագիծս. Գամին ծայրը կափարիչին մէջ խոթեցի և ուղիղ գիծ մը քաշեցի, կարելի եղածին չափ երկայն, և անոր վրայէն գամը պտտցուցի, ճեղք մը բանալու համար. Ձեռքերս կը պրկըւէին, կատաղաբար կը յամառէի. Երբ բաւական երեւցաւ ինձ որչափ որ փորած էի փայտին մէջ, մտածեցի հակառակ կողմը դառնալ, յետոյ, ծունկերուս եւ արմուկներուս վրայ կրթնելով, մէջքովս հրել. Կափարիչը ճառաչեց, բայց չճեղքըւեցաւ. Բաւական խորունկ չէի փորած. Ստիպուեցայ նորէն կռնակի վրայ դառնալ և աշխատութիւնն յառաջ տանիլ, ինչ որ մեծ նեղութեամբ կրցայ ընել. Վերջապէս նոր ճիգ մ'ալ ըրի, և այս անգամ կափարիչը կոտրեցաւ, մէկ ծայրէն մինչեւ միւսը.

Արդարեւ, չէի ազատած, բայց յոյսը սիրտս կ'ողողէր. Ալ չէի հրեր, չէի շարժիր, վախնալով որ հողը վրաս կը փլէր ու կը թաղէր զիս. Միտքս դրած էի կափարիչն իբրեւ վահան գործածել, մինչդեռ պիտի ջանայի հորի պէս բան մը բանալ կաւին մէջ. Դժբաղդաբար, այս աշխատութիւնը մեծ դժուարութիւններ ունէր. Թանձր հողի կոյտերը փրթելով կը դիզուէին փայտին վրայ որով չէի կրնար շարժել զայն. երբեք պիտի չկարենայի մակերեւոյթին հասնիլ, արդէն մասնական խարխալումներ կռնակս կը կորացնէին ու դէմքս հողի մէջ կ'ընկղմէին. Հողը նորէն կը պատէր զիս, երբ յանկարծ մը գտնելու համար կ'երկննայի, այնպէս թուեցաւ ինձ որ դագաղին այդ կողմի փայտը ճնշման տակ կ'երերար. Աւելի ուժով զարկի գարշապարովս, մտածելով որ թերեւս այդ տեղը փոս մը կար զոր նոր կը փորէին.

Ցանկարծ, ոտքերս պարապութեան մէջ մխուեցան. Ճիշդ էր գուշակութիւնս. Նոր բացուած փոս մը կար հոն. Հողի բարակ պատուար մը կար միայն զոր ծակելով կրնայի այդ փոսին մէջ գլորիլ.

Փա՛ռք քեզ Աստուած, ազատած էի.

Վայրկեան մը, մնացի կռնակի վրայ, աչքերս վեր դարձուցած, ծակին խորը. Գիշեր էր. Երկինքը, աստղեր կը պսպղէին թաւշային կապոյտի մը մէջ. Մերթ ընդ մերթ հով մը կ'ելլէր որ գարնան գաղջութիւն մը, ծառերու հոտ մը կը բերէր ինձ. Փա՛ռք քեզ Աստուած, ազատած էի, շունչ կ'առնէի, և կը սկսէի տաքնալ, ու կուլայի, ու կը թոթովէի, ձեռքերս երկիւղածութեամբ դէպ յանսահման տարածութիւնն երկնցուցած. Ա՜խ, ի՜նչ անուշ էր կեանքը.

ԷՄԻԼ ԶՕԼԱ

Թարգմ. Ա. Զ.

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1.000,000   "ՖԻՆԻՔՍ"   Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782



ՓԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 17.000.000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 51

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծականի տուներ, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոյս, որք ունինք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆռանք	8.000.000
Պահեստի դրամ ցվերջ յունիսի 1889	»	5.604.722
Տարեկան հասոյթ	»	12.773.779

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՐԹՈՒԱՋ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6.250.000   Պահեստի դրամ ֆռանք 1.270.300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխ ու պահեստի դրամն է   Աւելի քան 100.000.000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաբու, Անանիատիս խան. 3

ՍՏԱՄՈՔՍԻ ԽԹՈՒԹԻՒՆՔ

Բարիզի Բժշկական Ակադեմիայէն անուանեալ յանձնաժողով մը, ուսումնասիրելու համար Պէլլօքի Ածուխին ազդեցութիւնը, հաստատած է թէ Ստամոքսի ցաւերը, Դժուարին կամ ցաւագին մարսողութիւնք, խիթք, Ստամոքսի գաղութիւն, փսխելու տրամադրութիւն և այլն, կը դադրին երբ մարդս մէկ քանի օր գործածէ այս դեղը, կամ փոշիէն, կամ բասդիլէն. Ախորժակը, հանդարտութիւնը կ'զգացուի առաջին անգամէն իսկ. ախորժակը կը բացուի և այդ հիւանդութեանց մէջ սովորական եղած պնդութիւնը կ'անհետանայ։ Պէլլօքի Ածուխին հականեխական յատկութիւնք զայն ապահով և անվնաս դարման մը կ'ընեն համաճարակ հիւանդութեանց մէջ, ինչպէս թանչքի, փոր քշուքի, քոլէրինի, ժանտատենդի. Պէլլօքի Ածուխը կը գործածուի թէ' այս հիւանդութեանց առաջքն առնլու և թէ' բուժելու։

Փոշիին իւրաքանչիւր շիշը և Բասդիլներուն իւրաքանչիւր տուփը պարտին ունենալ Տր. Պէլլօքի ստորագրութիւնն և կնիքը.

Կը ծախուի ամէն Դեղատանց մէջ. 64

ՄԱԴԴՈՆԻ

ԿԻՍՀԻՒՊԼԸՐ

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ
ԲՆԱԿԱՆ ՋՈՒՐ

Կալաքարային թթուուտ աղբիւր
ամենամաքուր

ՍԵՂԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ԵՒ ԶՈՎԱՐԱՐ ԸՄՊԵԼԻ

Հալեցու, խաշափոցի բորբոքմանց, ստամոքսի և աղեաց համար յանձնարարեալ։

Հայնրիխ Մադդոնի, Գարլսպատ և Վիեննա   105

ԽԱՐԻՍՄ

ԿԵՆԱՑ, ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏԱՑ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ի ՎԻԵՆՆԱ

Գործողութիւնք 1889 Դեկտ. ամսուն

Այս ամսուան մէջ ստացուած և ստորագրուած են 844 նոր մուրհակներ (բոլիս) որք կը կազմեն ապահովագրեալ դրամագլուխ, Ֆր. 5.117.407.50

Բաժիններու գանձ.	»	432.287.03
Վճռմ. մահուանց առթիւ	»	296.100 —

1888 դեկտ. 31ին երաշխաւորեալ հասոյթ, Ֆր. 88.469.460.35

Ամբողջութիւն ապահովագրեալ գումարաց, Ֆր. 434.419.824.71

Վճարեալ գումար » 152.322.584.88

Տեղեկութեանց համար դիմել առ ընդհանուր Գործակատարն Պ. ԼԻՈՆԷԼ ՊՈՆՏԻ, Թիւնէլի հրապարակ, տուն Մայէրի, երկրորդ յարկ. 105

Ընկերութեան սեղանաւորն է Պ. Ս. ԱՏԼէՐ



ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՍԷՅԼԵԱՆ
Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիա և Բոսֆոր միջեւ կանոնաւոր գնացք

Սամսոն, Տրապիզոն, Պաթում և Նովոռոսսիսք երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մէնէլէք որ սեպտ. 3ին Մարսիլիայէն և սեպտ. 9ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Ա.... որ պիտի մեկնի սեպտ. 2ին.

Բարիզ, Լիոն, Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 250 Փրանք
Բ. » 178 »

Ուղեւէ և ապրանք փոխադրութեան Նաւաղչէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն ԹԻՄՈԹԷ ԸՐԳՈՒՆ Թիւ 17-18 Քիւչիւք Միւէթ Մահմուտ փաղոց, Թիւ 14

14

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹԵՐ

ՔՐԱՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, 117, ՆԻՒ ՊՈՆՏ ՍԴՐ. ԼՈՆՏՈՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ

ԼԷ ԺՈՒԱՑՕ ՏԸ ԼԱ ԳՈՒՌՈՆ, Նոր սքանչելի հոտ
ՔՐԱԳ ԷՔԼ ՊԼՈՍՈՄՍ, վարդի խնձորենւոյ ծաղիկք
ՋԱՐԻՆԱ, Ռուսական գոգանոյշ հոտ
ՀՈՒԱՅԴ ԼԻԼԱՔ, ճերմակ եղրևանի
ԳՈՐԻԼՈՊՍԻՍ, Նորելուկ
ՓԱՅՄՍ ՎԻՕԼԷԴ, հեշտաբոյր
ԱՍՖՈՏԷԼ, ՕՐՔԻՏԻԱ, ՋԻԲՐ, ևն.
ՀՈՒԱՅՏ ԷԼԻՈԴՐՈՓ

ԷՍ. ՊՈՒՔԷ
ՃՈՔԻ ՔԼԸՊ
ՕՐՈՐՕՆԱՔՍ
ՎԻՊԷԴ
ԻԼԱՆԿ-ԻԼԱՆԿ
ՄԻԼՖԼԷՕՐ
ՃԷՐՄԱՆ ՎԱՅՈԼ ևն.



«Քրապ Էբլ Պլոսսմսի առթիւ, Լոնտոնի Քուուրթ լրագիրը կ'ըսէ. «Եղանակին ամէնէն նորելուկ հոտերէն գերազանց կը համարինք Քրապ Էբլ Պլոսսմը, Լոնտոնի Քրաուն ընկերութեան. Կը ծախուի Թագի ձեւով խցեր ունեցող շիշերու մէջ. Միւս բոլոր տեսակները կեղծ են.

ԼԱՎԱՆՏԸՐ ՍՈԼԴՍ, անգղիական աղեր լաւանտայով — «Վայելուչ նորելուկ արդուզարդի ... ունեցող կանաչ շիշերու մէջ. Միւս բոլոր տեսակները կեղծ են.

ՕՐԱԼԻՆ փոշի. Տիկին Աստլինա Բաղդի կը գրէ. «Գոհունակութեամբ կ'ըսեմ թէ ձեր Օրալին ... փոշը քրէմ և այլն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պուլկարիոյ ներկայացուցչին քով. Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ Անգլիական ընդհանուր մթերանոց, Վալիտէ պահականոցին քով, կայարան Թրամուէյիցս, 95 և 67   106

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց
Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան

Ոսկեայ շքադրամ՝ Բարիզի 1889ի Տիեզերական Արուեստահանդէսին մէջ.

Բառն առաւել յաջողութիւն յԻտալիա, յԱմերիկա, ի Հնդկաստան, յԱրեւելս և յԵգիպտոս —Շքադրամ 1885ի Անվերսայի, 1884ի Թուրինի, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մէլպուրնի և Պրուքսէլի, 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատելֆիոյ, 1873ի Վիեննայի միջազգային ցուցահանդէսներուն մէջը։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ պիտտըրն է.—Շատ բժիշկներէ կը յանձնարարուի երբ զգուշանալ ուզեն տարափական ճահճային երկիրներու տենդերու, տարափոխիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱՆ կը դիւրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը գրգռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիք, բոլոր ծանօթ պիտտըրներէն և ամեններէն գերազանց, կ'առնուի ամեն օր ճաշէն առաջ երբ ախորժաբեր. Ճաշէն յետոյ, որպէս մարսողական է. կարելի է խառնել զայն վերմութի, գինիի, Սէլձի ջրոյ և խահուէի հետ։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպէս և նոյն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր անուշարարաց, նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կեդրոնատեղին է ՊՈՆՈՄԻ և ԲԷՔՔԻԱ   107

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՅԱՌԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԷՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջազգային Թղթատարատան վրայի յարկը





ՅԱՌԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԷՐԿ   8

Կ. Ս. ԴԱՐՈՒ ՑԱՋՈՂՈՒԹԻՒՆ.—53 վարձատրութիւնք՝ որոց 14ը ոսկի միտալ եւ 15ը պատուոյ վկայագիրք.

Մէնթայի ճշմարիտ Ալքոլը՝

ՌԻՔԼԷՍԻ ՄԷՆԹԱՅԻ ԱԼՔՈԼՆ Է

Մարսողութեան, ստամոքսի և գլխու ցաւերու համար գերազանց

Միակ ճշմարիտ ՄԷՆԹԱՅԻ ԱԼՔՈԼՆ է որ հեշտահամ, առողջ և աժան ըմպելի մըն է, տաք երկիրներուն մէջ անհրաժեշտ։ Ջղաչական հզօր դեղ մըն է ընդդէմ տարափոխիկ հիւանդութեանց. ինչպէս և արդուզարդի ու ակռայի ընտիր ջուր մը։—Կը գտնուի ամէն լաւ Դեղավաճառատանց և Դեղարաններու մէջ։

ԿԸ ԾԱԽՈՒԻ ՆԱԵՒ

ԳՈՐԾԱՐԱՆ Ի ԼԻՈՆ, 9, Գուռ տ'Էպալիւ.   ՌԻՔԼԷՍԻ ՄԷՆԹԱՅԻ ՔԱՍԹԻԼՆԵՐԸ   Կեդրոնատեղի Բարիզ, 14, Ռիշէ փողոց.

Պահանջել Ռիքլէսի անունը   150

ԱՒՈՂ ՋՈՒԹԻՒՆ—ՈՅԺ—ԿՈՐՈՎ



ՖՈՍՖՈՏԻՆ ՏՈՔԹՈՐ ԼԱԼՈՐԻ —Վերջին քսան և հինգ տարուան մէջ ապացուցուած է թէ այս դեղը ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ՄԻԱԿ ԴԱՐՄԱՆՆ է որ մինչեւ ցարդ գտնուած է, կատարելապէս բուժելու համար ուղեղի հիւանդութիւններն, անգամալուծութիւն, քնատութիւն, զառանցանք, ատոնական կարողութեան վաղահաս կորուստ, եւ ատոնական ոյժերու կորուստէն յառաջ եկած ամեն գործարանական խանգարում։

Կը բուժէ դժուարամարսութիւնը, ջղային եւ սրտի հիւանդութիւնները, լեարդի եւ երիկամանց հիւանդութիւններն, արեան շրջանի բոլոր խանգարումները. ընդհանուր հիւծութիւնն եւ տկարութիւն. կը կասեցնէ կենսական ոյժերու կորուստ որ յառաջ եկած է ...։

Ջղային տկարութեան եւ սուր հեռաւնանց մէջ այս դեղին ազդուութիւնն անմիջական եւ մնայուն է. Մելամաղձութեան զգացումներն եւ ախտանիշք կ'անհետանան ճշմարտապէս հրաշալի արագութեամբ մը։

ՏՈՔԹՈՐ ԼԱԼՈՐԻ ՖՈՍՖՈՏԻՆԸ ջղային հիւթ եւ ուղեղային զգայութիւն կ'առաջնէ, արեան մէջ մուծանելով կենսական ելեկտրական տարրը, ֆոսֆորն, որ ուղեղին կեդրոնական ճշմարիտ զգայութիւնն է. Ատոնական կորովը կը կենդանացնէ մարդկային ամբողջ գրութեան մէջ, մարմնոյն եւ մտքին տալով հանգիստ եւ առողջ առողջութիւն մը. այնպէս որ կարելի է բոլոր պարտականութիւնները կատարել վստահութեամբ եւ գոհունակութեամբ. Ախորժակը կը զօրանայ, կը զօրացնէ արիւնն եւ նոր առուգութիւն մ'... ուղեղին, ջղային դրութեան եւ մկանանց. Իսկ վերանորոգիչ ազդեցութիւնը կը տեսնուի գոր ծածուած առաջին օրէն իսկ. Ջղային դրութեան եւ մտաւորական ... յաւելմամբ եւ կորութեան եւ քաջութեան զգացմամբ մը ...

... Dr. Lalors' Phosphodyne, London, England ...

106

Մեծաքանակ եւ փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ներկայացուցչին քով,

Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

Անգլիական ընդհանուր մթերանոց, Վալիտէ պահականոցին քով. կայարան Թրամուէյից, 95 և 97.



ՄԱՐԱՎԻԼԻԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

Ոսկէտ կը ջնջէ խորշոմներն և ... կերպով յառաջ եկած այլերը։ Կ'անհետացնէ ծաղկի նշանները, ցաներ, արեւէն թողած այրուցքը ևայլն։

Դեմքին կուտայ երիտասարդութեան ամէն հրապոյրները։ Գեղեցիկ սեռին ներքին խնամոց համար թանկագին գիւտ։

Թուրքիոյ համար ներկայացուցիչն է Պ. Ֆ. Պէլլիօ, Ֆրեւուչեան խան, Պոլիս։ Ընդհանուր մթերանոցն է Լոմեւծէ Դորուանտ, Ղալաթիա, Եէնիքէօյ գալլօրը, Վայվոտայի քով —Կեղծիքէն զգուշանալու համար, դիմել միայն մթերանոցին։   33

ՊՈՒՏԱՐԷՇԹԻ ՄԱՔՐՈՂԱԿԱՆ

(ՀՈՒՆԳԱՐԻԱ) ԱՂԲԻՒՐ

1885ին Հունգարիոյ Մայրաքաղաքի Տիեզերական Ցուցահանդէսին մէջ՝ յառաջդիմութեան, մրցման կարողութեան եւ արտածման մեծ մետալ ստացած է, զոր այդ ցուցահանդէսին դարուարբ նշանակած էին իբր առաջին մրցանակ մաքրողական հանքաջրոց համար։

Այս աղբիւր մեծագոյն մրցանակներն պատուած է ինն ցուցահանդէսի մէջ. կը փայլի հօթն ոսկեայ եւ արծաթեայ միտալներով. բայց սոսկ բժշկական աշխարհին համարումը կը վայելէ իր ազդուութեան և անուշութեան զարմանալի կարողութեան համար։

ՖՌԱՆՍՈՒԱ-ԺՕԶԷՖ աղբիւրը վերջերս դրուատուած է Բարիզի բժշկական Ակադեմիայէն և Լոնտոնի համբաւաւոր Լընտըն-Հոսփիթալ հիւանդանոցէն. բաց աստի, այս ջուրն արդէն առաջին փորձով կը յայտնէ ինքզինքը։ Այս ջուրին վրայ տեսութիւններ ծրիաբար կը տրուին այս ջրին բոլոր մթերանոցներու, գլխաւոր դեղատանց և Պուտաբէշթի դրասենեկին մէջ։

Նմանօրինակ ուրիշ ջրերու հետ շփոթութեան առաջքն առնլու համար, խոհեմութիւն է միշտ փնտռել «Ֆրանսուա-Ժօզէֆի մաքրողական Աղբիւրին նշանը որ կը գտնուի ամէն շիշերուն վրայ։




ՄԱՔՐՈՂԱԿԱՆ ԱՂԲԻՒՐ
FRANÇOIS JOSEPH
ՊՈՒՏԱՓԷՇԹ (ՀՈՒՆԳԱՐԻԱ)

Տիեզերական կերպով ընդունուած է՝ իբր անվրէպ ազդուութեան համար։

ԱՄԷՆ ՈՒՐԵՔ ԿԸ ԾԱԽՈՒԻ

Կը գտնուի Տ. և Մ. Մէգիքի և Ս. Քրիստեա՝ Պոլիս, Ս. Գասդորիատէս և Ա. Թիլթեան Ղալաթիա, Ճ. Քանզուք՝ ի Բերա։ Թուրքիոյ համար լըրծակալն է Պ. Ֆ. Պէլլիօ, ի Պոլիս։   34

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ



ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

Ի կ... Մայիս (Ն. Տ.) 1890, մինչեւ յնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

Առաւօտ (6–26) · Իրիկուն (28–50)

	6	8	10	52	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46	48	50	
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 30	7 ...	7 30	7 50	8 30	9 ...	9 30	10 ...	10 30	11 ...	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 ...	4 30	5 ...	5 30	6 ...	6 30	7 ...	7 30	...
Գում—գաբու	6 9	7 9	7 39	8 8	8 39	9 9	9 39	10 9	10 39	11 9	11 39	12 9	1 39	2 9	2 39	3 9	4 9	4 39	5 9	5 39	6 9	6 39	7 9	7 41	...
Ենի—գաբու	6 43	7 13	7 43	...	8 43	9 13	9 43	10 13	10 43	11 13	11 43	12 13	1 43	2 13	2 43	3 13	4 13	4 42	5 13	5 42	6 13	6 43	7 13	7 45	...
Տաւշան փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 49	7 19	7 48	...	8 49	9 18	9 49	10 19	10 49	11 18	11 49	12 19	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 47	5 19	5 47	6 19	6 49	7 19	7 51	...
Եէտի—գուլէ	6 54	7 23	8 1	8 22	8 54	9 21	9 54	10 23	10 54	11 21	11 54	12 22	1 54	2 21	2 54	3 23	4 25	4 54	5 24	5 50	6 24	6 53	7 23	7 56	...
Մագրիգիւղ	7 9	7 33	8 12	8 39	9 6	...	10 5	10 35	11 6	...	12 6	...	2 6	...	3 5	3 36	4 35	5 5	5 36	...	6 36	7 4	7 34	8 7	...
Այ Ստեֆանօ	7 18	...	8 21	8 52	9 15	...	...	...	11 15	...	12 17	...	2 15	...	...	3 45	...	...	5 45	...	6 47	...	7 42	...	...
Քիւչիւք Չէք.	...	...	...	9 2	...	...	...	...	...	...	12 25	...	...	...	...	...	...	...	...	...	6 55	...	...	...	...
...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

Առաւօտ (5–25) · Իրիկուն (27–49)

	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	47	51	49	
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք.	...	6 50	...	...	...	...	...	...	...	...	...	...	1 20	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Այ Ստեֆանօ	6 30	7 ...	...	8 ...	8 30	...	9 30	...	...	...	11 30	...	1 30	...	2 30	...	4 ...	...	...	...	6 ...	...	7 6	...	...
Մագրիգիւղ	6 40	7 10	7 40	8 11	8 40	...	9 40	10 10	10 40	...	11 40	...	1 40	...	2 40	3 10	4 10	4 40	5 10	...	6 10	7 10	7 18	8 14	...
Եէտի—գուլէ	6 52	7 22	7 51	8 23	8 52	9 26	9 53	10 24	10 53	11 26	11 53	1 24	1 53	2 26	2 53	3 24	4 24	4 53	5 23	5 55	6 23	7 34	7 43	8 29	...
Սամաթիա	6 56	7 26	...	8 26	8 56	9 29	9 57	10 28	10 57	11 29	11 57	1 28	1 57	2 29	2 57	3 28	4 28	4 57	5 27	5 58	6 27	...	7 57	8 33	...
Տաւշան փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Ենի—գաբու	7 2	7 32	...	8 32	9 2	9 34	10 3	10 34	11 3	11 34	12 3	1 34	2 3	2 34	3 3	3 34	4 34	5 3	5 33	6 4	6 33	...	...	8 39	...
Գում—գաբու	7 8	7 38	7 59	8 38	9 8	9 38	10 8	10 38	11 8	11 38	12 8	1 38	2 8	2 38	3 8	3 38	4 38	5 8	5 38	6 8	6 38	7 42	8 6	8 48	...
Կ. Պոլիս	7 16	7 46	8 7	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	11 46	12 16	1 46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 16	5 46	6 16	6 46	7 50	8 15	8 51	...
...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մագրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին. Թիւ 1 և 2 կառախումբերն ունին Ա. Բ. և Գ. կարգի վագոններ. միւս կառախումբերն ունին միայն Բ. և Գ. վագոններ։   13

Արտօնատէր   Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ